


9537


ЗКМ

Г- 28



AM-572

904



Դ. ՄԱՆՈՒԻԼՍԿԻ

ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ԳՈՐԾԿՈՄԻ  
ՀԱՄ Կ (Բ) Կ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱՆ ՔԻ ՄԱՍԻՆ

ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՑՈՒՄ  
ՀԱՄ Կ (Բ) Կ XVII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

507/68

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1934

Արմ.  
2-3143a

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԲՈՒՆԱԿԱՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ

1 DEC 2009

Գ. ՄԱՆՈՒԻԼՍԿԻ

3K11

Մ-28

ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ԳՈՐԾԿՈՄԻ  
ՀԱՄԿ (Բ) Կ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՑՈՒՄ  
ՀԱՄԿ (Բ) Կ XVII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ  
2 ՓԵՏՐՎԱՐԻ 1934 Թ.

Г.П.Б. в Ленин

А. 1934 г.

Ак. № 129

Инв. № 20726

ԿՈՒՍՏՐՈՍ  
ՅԵՐԵՎԱՆ

1934

24 JUN 2013

9537



39888-67

Թարգմանիչ Ա. Անանյան, Հ. Մանուկյան  
 խմբ. և Մակրեց Տեխ, խմբ. Մ. Նիրիկ  
 Սրբազրիչ Հ. Թուրքյան Ֆիլավիտ 7834 (p)  
 Հրատ 199. Մ. Դ. Պատ 499. Տիրամ 10000  
 Պ ե տ ե ր ա տ ի տ պ ա ր ա Յ

Հանձնված և արտագրված 2 մարտի  
 Ստորագրված և տպելու 26 մարտի

# I

## ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՃԳՆԱԺՈՐԻ ԱՋԻՐԱՆ ԻՐԱՍԻՆ

Ընկերներ, XVI համագումարից հետո անցած ժամանակա-  
 շրջանը, վոր անցավ համաշխարհային տնտեսական ճգնաժամի  
 դարձրացման նշանով, բնորոշվում է ֆաշիզմի աճումով, լուսի-  
 րիստիստական պատերազմների սանձարձակումով ու մասսաների  
 հեղափոխական շարժման ուժեղացմամբ, վորոնք նպաստում են  
 հեղափոխական ճգնաժամերի հասունացմանը կապիտալիստական  
 առանձին յերկրներում:

Կուսակցության XVI համագումարում ընկ. Ստալինի արած  
 համաշխարհային դարձրացման սրողնողը հաստատված է նա-  
 խընթաց 3 1/2 տարվա համաշխարհային անցքերի ամբողջ ընթաց-  
 քով:

1930 թվի ամառը կուսակցության XVI համագումարում ընկ.  
 Ստալինն ասաց, վոր կապիտալիզմի կայունացումը հասնում է  
 իր վախճանին: 1932 թվին ԿԻԳԿ XII պլենումը հաստատեց կապի-  
 տալիստական կայունացման վախճանը:

Կուսակցության XVI համագումարում ընկ. Ստալինն ասաց,  
 վոր մասսաների հեղափոխական շարժման վերելքն աճելու յն նոր  
 ուժով: Ներկայումս կապիտալիստական ամբողջ աշխարհում ա-  
 ճում է հեղափոխական շարժումը, վոր միջանի յերկրներում ըն-  
 դունում է նույնիսկ բանակում տեղի ունեցող խմորումների ձև:

Կուսակցության XVI համագումարում ընկ. Ստալինն ասաց,  
 վոր տնտեսական ճգնաժամը կվերանի քաղաքական, աշխինքն

հեղափոխական ճգնաժամի: Ներկայումս, 1934 թվին մի շարք կապիտալիստական յերկրներում արդեն առկա յե «վերնախավերի» ճգնաժամը, վոր մի քանի յերկրներում վերաճում ե համաղգային հեղափոխական ճգնաժամի:

Այդ նույն ժամանակ ընկ. Ստալինն ասաց, վոր բուրժուազիան ներքին քաղաքականության ասպարիզում յեւք ե վորոնեյու հետագա Փաշիպացման մեջ, սրա համար ոգտադործելով բոլոր ուսակցիոն ուժերը, այս թվում նաև սոցիալ-դեմոկրատիային: 1933 թվի հունվարին Յեվրոպայի կենտրոնում՝ Գերմանիայում բուրժուազիան հաստատեց Փաշիստական դիկտատուրա՝ աշխանշան տալով համաշխարհային ամբողջ ուսակցիային բանվոր դասակարգի վրա հարձակելու համար: II Ինտերնացիոնալն այն բանից հետո, յերբ գերմանական սոցիալ-դեմոկրատիան խայտառակ կերպով կապիտուլացիայի յենթարկիւեց Փաշիզմի հանդեպ, բոլոր ուժերով ընթանում ե հետագա Փաշիպացման ուղիով:

Ընկ. Ստալինն ասաց, վոր արտաքին քաղաքականության ասպարիզում բուրժուազիան յեւք ե վորոնեյու իմպերիալիստական պատերազմների ե առանձնապես ԽՍՀՄ դեմ հակահեղափոխական պատերազմ մղելու մեջ: 1931 թվին ճապոնական իմպերիալիզմը հարձակիւեց Չինաստանի վրա, այս պատերազմը վարում ե մինչև այժմ ե այսոր հակահեղափոխական պատերազմ ե սպառնում Խորհուրդների յերկրին:

Վերջապես, ընկ. Ստալինն ասաց, վոր պրոլետարիատը, պայքարելով կապիտալիստական շահագործման ու պատերազմի վտանգի դեմ, յեւք պիտի վորոնի հեղափոխության մեջ: Վերջին յերեք տարում տեղի ունեցավ չինական հեղափոխության հետագա դարգացումը՝ կապիտալիստական խորհուրդների հակայական հաջողութիւնների հետ: Իսպանիայում հեղափոխութիւն ե, վորր բուրժուական-դեմոկրատականից վերաճում ե պրոլետարական հեղափոխութիւն:

ԿիՊԿ 11½ ամիս առաջ գումարված 13-րդ պլենումը համառոտեց, վոր աշխարհն արդեն ընդհուպ մոտենում ե հեղափոխութիւնների ու պատերազմների նոր տուրի:

Համաշխարհային դարգացման այս ինչ վուել ե, ընկերներ, վոր բնորոշվում ե կապիտալիստական կայունացման վախճանով ու կապիտալիստական աշխարհի՝ հեղափոխութիւնների ու պատերազմների յերկրորդ տուրի մեջ ներտրպալով: Սա համաղգային ճգնաժամերի հասունացման վուելն ե կապիտալիստական առանձին յերկրներում: Սա կապիտալիզմի համաշխարհային սխտեմի հեղափոխական ճգնաժամի հասունացման վուելն ե:

Հեղափոխական այս ճգնաժամն աճում ե կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի սրումից: Սակայն նա յենթադրում ե կապիտալիստական սխտեմի ավելի մեծ խարխուլում, նրա տնտեսական ու քաղաքական կապերի ավելի մեծ անկում, մասսայական հեղափոխական շարժման ավելի մեծ թափ, իսկ վոր գլխավորն ե՝ պրոլետարական հեղափոխութիւնն ուժերի ավելի մեծ կազմակերպութիւն, Կոմիւնտերնի ու նրա սեկցիաների ավելի մեծ ազդեցութիւն, քան այն, ինչ մեք այսոր ունենք առկա:

Հեղափոխական ճգնաժամն անխուսափելիորեն կհասունանա, վորովհետև դարգացող մասսայական հեղափոխական շարժումները կարգացնեն կապիտալիստական սխտեմի հետագա խարխուլումը, իսկ այս խարխուլումն իր հերթին կնպաստի պրոլետարական հեղափոխութիւնն ուժերի ե Կոմիւնտերնի ուժերի աճման: Նա անխուսափելիորեն կհասունանա, վորովհետև յերկրորդ հնգամյակի կատարման ե ԽՍՀՄ-ում պրոլետարական դիկտատուրայի ամրացման հետ զուգընթաց կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի խորացման պայմաններում կիտիոխվի նաև դասակարգային ուժերի հարաբերութիւնը հոգուտ պրոլետարական հեղափոխութիւն:

Կապիտալիզմն, ըստ յերեւելի, անցել ե տնտեսական ճգնաժամի ամենացածր կետը, ե ներկայումս, սկսած 1932 թվից նա դուրսում ե նույն տեղում: Բայց յիթե նույնիսկ նրան հաջողվի ժամանակավորապես դուրս պրծնել ու անդնել դեպրեսիայի վուլը ե նույնիսկ մի քիչ ավելի բարձր, ապա այնուամենայնիւ չի յինի վոչ «բարդավաճում», վոչ ել կապիտալիստական կայունացման վերականգնում: Յեվ սրանով դեպրեսիայի ու նույնիսկ մի քիչ ավելի բարձր կոնյուկտուրայի շրջանի կապիտալիզմը կտարբեր-

վեր այն կապիտալիզմից, ինչ դրուժյամբ նա 1929 թվին թևակոխեց Համաշխարհային տնտեսական ճգնաժամը: Այս ճգնաժամի հինգ տարիները ել ավելի խարխուլեցին կապիտալիզմի Համաշխարհային սխտեմը և խորացրին նրա ընդհանուր ճգնաժամը, մանավանդ, վոր այս հինգ տարիների ընթացքում աճել և խորհրդային Միության տնտեսական, քաղաքական ու ռադմական գորությունը, վոր ինդադ ուկրաինայի ափերին հանձին չինական խորհուրդների դոյացել և Համաշխարհային պրոլետարական հեղափոխության մի նոր ֆորպոստ և աճել են ուրիշ քաղաքական ֆակտորներ, վորոնք արագացնում են հեղափոխական ճգնաժամի աճումը. դրանք են՝ պատերազմը Հեռավոր Արևելքում և ֆաշիստական դիկտատուրայի հաստատումը Գերմանիայում: Յեւ սա հարկաւոր և առանձնապես ընդգծել, վորսիւհետեւ այս մեծ նշանակություն ունի Համաշխարհային բանվորական շարժման հեղափոխական հեռանկարները վորոշելիս: Դեպքերիսի վիուլը, որինակ, դերմանական ֆաշիզմին չէր տա այն դադարը, վոր ստացաւ խտալական ֆաշիզմը կապիտալիստական մասնակի կայունացման շրջանում:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի այս հինգ տարիների ընթացքում կապիտալիստական սխտեմի խարխուլումը ությունն այնքան հեռու գնաց, վոր հեղափոխական ճգնաժամի որսկտիւ նախագրյալներն արդեն հասունացած են կապիտալիստական սխտեմի առաւելապես թույլ ողակներում, դադութներում ու կախման մեջ գտնվող յերկրներում, նրանք Համարյա հասունացած են Կենտրոնական Յեւրոպայում (Գերմանիա, Ավստրիա, Չեխո-Սլովակիա), Բալկաններում, Լեհաստանում, Մերձրայթյան յերկրներում, նրանք հասունանում են կապիտալիստական սխտեմի այն առաւելապես ուժեղ ողակներում, վորոնք այդ սխտեմում դրավում են իշխող բարձուքները՝ ՀԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Անգլիայում:

## ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԳՆԱԺԱՄԻ ՀԻՆԳՍԱՐԻՆԵՐԻՑ ՀԵՏՈ

Թե՛ այս ճգնաժամի հինգ տարիների ընթացքում, թե՛ առանձնապես կուսակցության 16-րդ Համագումարից հետո անցած հաւթետու ժամանակաշրջանում տեղի յեն ունեցել թե՛ կառուցվածքային փոփոխություններ համաշխարհային կապիտալիստական տնտեսության մեջ, թե՛ տեղաշարժեր կապիտալիստական պետությունների ուժերի հարաբերակցության մեջ միմյանց միջև, թե՛ ԽՍՀՄ հանդեպ նրանց վերաբերմունքի մեջ. տեղի յն ունեցել պրոլետարական հեղափոխության ուժերի աւրացում յուրաքանչյուր առանձին պետության մեջ՝ բուրժուական ռեակցիայի ուժերի համարմաման հետ միասին, այսինքն տեղաշարժեր, վորոնք իրենցաւ վորոշում են պայմաններ կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի՝ կապիտալիստական սխտեմի հեղափոխական ճգնաժամի վերաճելու համար:

Համաշխարհային կապիտալիստական սխտեմը մինչև ճգնաժամը նրա մեխանիզմի ալյաստանքի ունեցած մեծ ընդհատումէրոււ, ռայց այնուամենայնիւ հասաւ տնտեսական կապերի վորոշ վերականգնման, վորոնք խախտվել էյին 1914—1918 թ.թ. իմպերիալիստական պատերազմից: Այժմ շնորհիւ Համաշխարհային տնտեսության ճգնաժամի խորտակիչ աղղեցության և այն միջոցների, վոր մոնոպոլիստական կապիտալն ու նրա կառավարությունները ձեռնարկում էյին նրանից դուրս դալու համար (հարձակում բանվոր դասակարգի վրա, ռադմական արդյունաբերության աղագացրած դարգացում, Ուտաւա, տնտեսական ինքնարաւություն, ինֆլացիա, տնտեսական աւալալյուտային պատերազմ), համաշխարհային կապիտալիստական տնտեսությունը ել ավելի անջատվից առանձին պետական հատվածների, վորը կանխորոշեց այնպիսի կատաղի շովինիզմի պրոթկում կապիտալիստական յերկրներում, ինչպես 1914 թվի պատերազմի առաջին որերին:

Մինչև ճգնաժամն արդեն տեղի էյին ունեւում կապիտալի կենտրոնացում ու Համակենտրոնացում, ավելի խոշոր մոնոպոլ-

լիստական միավորությունները կողմից ավելի մանր միավորությունների կլանում մանր ու միջակ ձեռնարկությունների քայքայումով հանդերձ: Ճգնաժամի հետևանքով այս պրոցեսներն ընդունեցին աննախընթաց չափեր, մի կողմից տնտեսական նախադրյալներ պատրաստելով պետական իշխանության ֆաշիստական կենտրոնացման համար, մյուս կողմից՝ ստեղծելով ապագա սակարդությանցած տարրերի մի հսկայական բանակ յերկվա մանր սևիականատերերից, վրոնք թնդանոթի պատրաստի միս են հանդիսանում ֆաշիստական ավանտյուրաների համար:

Մինչև ճգնաժամն արդեն տեղի յեր ունենում դյուդառնտեսության անկում, վորն անշեղորեն քայքայում եր դյուդացիության հիմնական մասսաներին, նրանց ստրկացնում եր վաշխառուներին ու բանկերին: Այժմ, ինչպես ցույց տվեց ընկ. Ստալինը, առկա յե դյուդատնտեսության դեգրադացիան, վոր կապված ե մեքենաներից ձեռնաշխատության անցնելու, տրակտորից յարույլն անցնելու, քայքայումից դյուդացիության ամենաընդարձակ խավերի հրեշափոր աղքատությանն անցնելու հետ:

Մինչև ճգնաժամը, կիրառվող դացիոնալացման հետևանքով վատթարանում եր բանվոր դասակարգի դրությունը, այժմ տեղի յե ունենում կտրուկ, սարսափելի թռիչք դեպի ցած: Ճգնաժամից առավելագույն ցնցված մի շարք կապիտալիստական յերկրներում բանվոր դասակարգի կյանքի նոր մակարդակն ավելի ու ավելի յե մոտենում դադության մակարդակին. նրինակ՝ տնտեսագետ Կուչինսկու տվյալներով գերմանական բանվորի միջին աշխատավարձը 1932 թվին իջել եր մինչև 64 տոկոս 1928 թվի հանդեպ և միայն կիսով չափ եր ծածկում նրա ապրուստի միխիումը: Իսկ սկսած առն ժամանակից, ֆաշիստական դիկտատուրայի ժամանակաշրջանում, աշխատավարձի հետագա կրճատման ու սոցիալական ապահովագրության կրճատման միջոցով բուրժուազիան դարձյալ  $3\frac{1}{2}$  մլրդ մարկ ե կողոպտել դերմանական բանվորներից: Իսկ բանվորների կյանքի մակարդակի այս հրեշափոր իջեցումը կապիտալիստական յերկրներում կապված եր արտադրության մեջ կանանց ու յերեխաների ավելի եծան ու քիչ կազմակերպված աշխատանքը

ներգրավելու հետ և հանդեց բանվորական արխտոկրատիայի դրության խախտման:

Մինչև ճգնաժամը դործադուրկ եյին միլիոնավոր մարդիկ, այժմ կապիտալիստական աշխարհում տասնյակ միլիոնավորներն են գուրկ մեռած ու կմնան արտադրական ապարատի աճած թերաբեռնման և ճգնաժամային ռացիոնալացման հետևանքով: Այժմ կապիտալիստական հասարակության մեջ աշխատելու իրավունքը դառնում ե մի արտոնություն, վոր ֆաշիզմն ոգտագործում ե բանվոր դատակարգի շարքերը պառակտում մոցնելու համար: Բուրժուազիան այս միլիոնավոր մարդկանց դրկում ե նախատից, նրանց համար ստեղծում ե հարկադրական աշխատանքի ճամբարներ, գիտակցաբար, կանխակալ դիտավորությամբ նրանց դնում ե այնպիսի դրության մեջ, վոր թնդանոթի միս ունենա պատերազմի համար, ձեռնարկություններում աշխատողներին նա դնում ե ռազմատնտեսական ռեժիմի պայմանների մեջ:

Վերջին հաշվով մոնոպոլիստական կապիտալը թեև լրտ յերևույթին անցել ե արդյունաբերության անկման ամենացածր կետը, բայց իր բոլոր միջոցառումներով ու առանձնապես կատաղի ճնշում դործադրելով մայրերկրների ու դադութների բանվորների ու դյուդացիների վրա, հետագա խորացման ե հասցրել կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը:

Միջազգային հարաբերությունների քաղաքականում համաշխարհային տնտեսական ճգնաժամը նմանապես սրել ե իմպերիալիստական բոլոր հակասությունները:

Մինչև ճգնաժամը իմպերիալիստական հակասությունները տարեց տարի աճում եյին անշեղորեն: Արդեն Կոմինտերնի 6-րդ կոնգրեսը 1928 թվին ահազանդում եր, վոր կապիտալիզմի հետպատերազմյան զարգացման սկսված 3-րդ չլջանը պետություններին ու դատակարգերին անխուսափելիորեն կհասցնի հսկայական ռեժիմության ընդհարումների: Այժմ իմպերիալիստական հակասություններն այնքան են հասունացել, վոր աշխարհի վերաբառման հարցը նորից հասունանում ե ավելի մեծ օրությամբ, քան 1914 թվին:

Կապիտալիզմն այժմ իրեն չի կարող թույլ տալ դեմոկրատական-սոցիալիստական դարազրկի չափալուծյունը, ինչպես կապիտալիստական կայունացման սկզբին: Իմպերիալիստական պատերազմը զրկած է աշխարհի կապիտալիստական բոլոր կառավարութունների որակարգում:

Այս մասին վկայում է այն մասերը, վոր մի շարք կապիտալիստական յերկրներում իշխանության գլուխ են անցել ծայրահեղ ռադիկալ կուսակցութուններ. յես նկատի ունեմ Ճապոնիան, Գերմանիան, Անգլիան:

Այս մասին խոսում է այն կապիտալիստական յերկրների ռադիկալ արդյունաբերության կատաղի աճումը, վորոնք առանձնապես տենդորեն պատրաստվում են պատերազմի (Ճապոնիա և Գերմանիա): Աշխարհն այժմ ամեն կողմից ակտիված է պայթուցիկ նյութերով, վորոնց մեջ չլմած կառավարութուններն ու նրանց գործակալները՝ ինչպես Վան-Պեր Լյուբերեն, նետվում են ստորերկրյա անցքերով, վառված ֆահերը ձեռքներին:

Պատերազմի մոտեցման մասին վկայում է այն դաշնագրերի խախտումը, վորոնցով կառավարող դատակարգը պատերազմների ու հեղափոխութունների առաջին տուրի չըջանում կարգավորում էր փոխհարաբերութունները միջազգային ասպարիզում: Ի՞նչ է մնացել այժմ Վերսալից:

Պետք է խելագար լինել մտածելու համար, վոր Գերմանիան կվճարի ռեպարացիաները, — կուսակցության 16-րդ համագումարում ասում էր ընկ. Ստալինը: Յեւ Գերմանիան իրոք խելագարվեց, յերբ նա իր մեջքին նստեցրեց Ֆաշիստներին, բայց դադարեց վճարելուց:

Գերմանիան դինաթափված էր մինչև ճգնաժամը: Այժմ նա զինվում է, այսօր նա կարող է միլիոնանոց խնակ դուրս բերել:

Վերսալում նրան հատկացրին մի վտիտ հողամաս, վորտեղ գերմանական բուրժուազիան և նրա գործակալ Վեյսերը հանդարտ նստած էին մինչև ճգնաժամը: Այժմ Ֆաշիստական Գերմանիան մաքսանկեղի նման գոգուճի ներս է մտնում սահմաններից, ամենուրեք տարածելով խառնակութուն ու հակահեղափոխական ա-

նարխիա: Գերմանիան դարձել է պատերազմի գլխավոր հրձիգը Յեվրոպայում: Կապիտալիստական բոլոր կառավարութունների գլխավոր շտաբներն արդեն իրենց մատերը պահում են ելեկտրական կոճակի վրա՝ պատերազմի հրեշավոր մեքենան գործի դնելու համար:

Ի՞նչ կատարվեց Վաշինգտոնի դաշնագրերի հետ, վորոնցով իմպերիալիստական պետութունները կարգավորում էյին ուժերի հարաբերակցութունը իրադ ուկիանոսում: Ս պետութունների վաշինգտոնյան դաշնագիրն իմպերիալիստական գիշատիչների համար Չինաստանում սահմանում էր «բաց դռների ու համասար հնարավորութունների սկզբունքը»: Բայց այժմ ճապոնական իմպերիալիստները հայտարարման կարգով ընդարձակում են իրենց հնարավորութունները, գործելով այն ամպակի սկզբունքով, վոր դիչերը վորոցում կողոպտում մերկացնում է անցորդին և խլում նրանից այն ամենը, ինչ հնարավոր է: Ճապոնիան սկզբում — 1931 թ. աշանը — խլեց Մանջուրիան, ապա Ժեխե նահանգը, հետո Չախարը. այժմ նա մոտենում է Արտաքին Մոնղոլիայի սահմաններին, փակելով Մանջուրիայի, Ժեխեյի ու Չախարի «բաց դռները» զարմացած Ամերիկայի քթի առջև: Ճապոնական զենեքային զին քիչ է չփոթեցնում նաև Վաշինգտոնի համաձայնության մյուս կետը, վոր վերաբերում է Չինաստանի «տերիտորիալ ամբողջությանը»: Ճապոնիան վոչ միայն այս կետը, այլև Վաշինգտոնի ամբողջ դաշնագիրը դարձրել է փաթաթելու թուղթ, վորով հայտնական յննթատյան սրբում է իր սվինից Չապեյում վոթած սրբունը:

Իմպերիալիստները սկսել են Չինաստանի բաժանումը: Չինաստանի շուրջը մղվող պայքարից, իրեն իմպերիալիստական հակասութունների հիմնական տարրերից մեկից, աճում է իրադարձվելյանոսյան մեծ կոնֆլիկտը, վորն արդեն ճեղքում է ծովային ու ծերի հարաբերակցությանը վերաբերյալ 5 պետութունների վաշինգտոնյան մյուս դաշնագրի չըջանակները:

Ո՞վ էր գլխավորում համաշխարհային ռեակցիան մինչև ճգնաժամը: Իմպերիալիստական Ֆրանսիան, վոր հանդես էր գալիս

իրրե ԽՍՀՄ դեմ ինտերվենցիայի քաղաքականություն վարելու գլխավոր նախաձեռնողը և կանգնած էր Վերսալի պաշտպանություն դիրքերում:

Ո՞վ և գլխավորում այժմ համաշխարհային ռեակցիան: Անգլիան: Անգլիան իր վրա յե վերցնում ԽՍՀՄ դեմ պատերազմ պատրաստելու առաջատար դերը, վորովհետև նա գիտե, վոր աշխարհի խմբերակալիտական հակառակորդների դեմ պատերազմելը, ինչպիսին ՀԱՄՆ-են, կհանգի նրա դադուխային տիրապետությունների բաժանման, վորովհետև նա գիտե, վոր կապիտալիստական պետությունների խմբերակալիտական նոր վոխադարձ պատերազմը կխախտի այն համասարակցությունը, վոր դերիշխող դեր և ստեղծում Անգլիայի համար: Անգլիան հակահեղափոխական պատերազմ և ուղում Խորհուրդների յերկրի դեմ, վորպեսզի այդ ճանապարհով, ինչպես մտածում են նրա պնդանձակատ քաղաքականները, խուսարի կապիտալիստական յերկրները չհեղափոխությունից և անգլիական կապիտալիզմի գործերը շտկի ի հաշիվ ԽՍՀՄ քնախան հակաշխային հարստությունների:

Անգլիական պնդանականներն այժմ կանգնած են ճապոնիայի ու Գերմանիայի թիկունքում, վորոնց ձեռքը նրանք դադանաբար ուղղում են ԽՍՀՄ դեմ: Անգլիան հանդես և դալիս իրրե մի միջնորդ, վորը վորձում և հաշտեցնել Ֆրանսիայի ու Գերմանիայի միջև յեղած հակասությունները, վորպեսզի միասնական ճակատ ստեղծի ԽՍՀՄ դեմ, նա կուղեր, վոր ԽՍՀՄ ու Ֆրանսիայի մերձեցման և Սմերիկայի կողմից ԽՍՀՄ ճանաչվելու հետևանքով խախտվեր խաղաղություն ամրացման գործը: Յեվ այս հակահեղափոխական քաղաքականությունը կիրառելու համար անգլիական բուրժուազիան վերցրեց վոչ թե լորդ, այլ նույնպես դոտով իր «Պուլ»-ն II Ինտերնացիոնալի լիդերների շրջանից: Յուրաքանչյուր դարաշրջան ծնում և իր հերոսը...

Յեվ այսպես, միջազգային թատերարենում արդեն սուկա յե պատերազմի նախորդակն խմբերակալիտաների միջև, աուկա յե խորհուրդների յերկրի դեմ հակահեղափոխական պատերազմի առանձնապես համառ հաղձնալ պատրաստությունը: Բայց աճող հակա-

ությունները դեռևս չեն պայթել ռազմական ընդհարման մեջ, վորովհետև բուրժուազիային առայժմ զսպում և համաշխարհային պրոլետարական հեղափոխության սպառնալիքը և չղթայում և սարսափը ԽՍՀՄ աճած զորություն առջև:

Բայց ի՞նչ և նշանակում, ընկերներ, պատերազմ ԽՍՀՄ դեմ, վոր ճապոնիայի ու Գերմանիայի հետ միասին պատրաստում և անգլիական բուրժուազիան: Սա միջազգային թատերարենում շարունակություն և հանդիսանում այն քաղաքական պատերազմի, վոր կապիտալիստական բոլոր յերկրների բուրժուազիան մղում և բանվորների դեմ, թեև տարրեր յերկրներում դաժանություն տարբեր աստիճանով:

Մինչև համաշխարհային տնտեսական ճգնաժամը բուրժուազիան մի շարք կապիտալիստական յերկրներում արդեն պայքարում էր կոմունիստական շարժման դեմ տերրորիտական մեթոդներով: Այսօր թե՛ այդ յերկրները քանակն և աճել, և թե՛ պայքարի մեթոդներն են ավելի բարբարոսական դարձել: Յեվ հենց այս մեկն արդեն վկայում և կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի խորացման ու սրման և այն պայմանների հասունացման մասին, վորոնցից աճում և հեղափոխական ճգնաժամը: Համարյա բոլոր կապիտալիստական յերկրներում այս կամ այն ձևով ուղիազծվել և «վերնախավերի» իր ազգային ճգնաժամը, վոր Չինաստանի ու Իսպանիայի բացառությամբ դեռևս չի հասել հեղափոխության, բայց իր հետևից բերել և բուրժուական բոլոր քաղաքական կուսակցությունների ֆաշիզացիան, ներառյալ նաև սոցիալ-դեմոկրատիան: Միևնույն յերկրներում, ինչպես Գերմանիան, նա հասել և ֆաշիստական դիկտատուրայի հաստատման:

Ինչո՞ւ տեղի ունեցավ այս: Այս տեղի ունեցավ այն պատճառով, վոր պրոլետարական հեղափոխության ուժերը դեռևս չեն հասունացել, իսկ համաշխարհային բուրժուազիան, հաշիվ առնելով ռուսական բուրժուազիայի պարտության դասերը 1917 թ. Հոկտեմբերին, իր ամբողջ ուժով հարվածում և պրոլետարիատին այն պահին, յերր նա դեռևս չի կարող ընդունել վճռական ժարար: Պրոլետարական հեղափոխության ուժերը կապիտալիստական ա-

ռանձին յերկրներում ժամանակավորապես ավելի թույլ դուրս յեկան, քան բուրժուական ռեակցիայի ուժերը: Նրանք ավելի թույլ դուրս յեկան այն պատճառով, վոր սոցիալ-դեմոկրատիան պառակտեց պրոլետարիատին. այն պատճառով, վոր նա բանվոր դասակարգի հսկայական մասսայական կազմակերպությունները, վորոնք առանձնապես սաստիկ աճել եյին հեղափոխությունների ու պատերազմների առաջին տուրից հետո, յենթարկեց կապիտալի ծառայությանը. այն պատճառով, վոր իր հետեից գնացող պրոլետարիատի մի մասին նա սխտեմատիկ կերպով բարոյալքում եր՝ բուրժուական դեմոկրատիան, այսինքն բուրժուական դիկտատուրան պաշտպանելու իր կոչերով. այն պատճառով, վոր նա տոգ'ց բուրժուադիային գինաթափելու բանվոր դասակարգին, ինչպես այս յերևում ե Գերմանիայի ու Ավստրիայի որինակով: Իսկ այս պատակոված բանվոր դասակարգն դեմ եր կանգնում մոնոպոլիտական կապիտալին ու խոչոր հողատիրությանը, վորոնք ժամանակավորապես հաղթահարեցին իրենց ներքին հակասությունները ֆալստական դիկտատուրա հաստատելով և բուրժուական ռեակցիայի ուժերը համախմբելով մի հարվածային բողոքի մեջ նրանց սպառնացող պրոլետարական հեղափոխության հանդեպ: Բանվոր դասակարգի պառակտումն ունեցավ նաև այն կործանարար հետևանքը, վոր նա հսկայական չափերով թուլացնում եր նաև պրոլետարիատի ազդեցության ուժը պրոլետարական հեղափոխության ռեզերվների՝ գյուղացիության հիմնական մասսաների, քաղաքային մանր բուրժուադիայի ստորին խավերի ու ծառայողների վրա: Սրա շնորհիվ Գերմանիայում գյուղացիության, քաղաքային մանր բուրժուադիայի ու ծառայողների նշանակելի մասը տատանվեց բուրժուական ռեակցիայի կողմը:

Մի չարք տարիների ընթացքում սոցիալ-դեմոկրատիան ԽՍՀՄ պրոլետարական հեղափոխության ու սոցիալիստական շինարարության դեմ մղած իր քայքայիչ պրոպագանդով նախապատրաստում եր այդ խավերի, թող վոր ժամանակավոր, բայց և այնպես ճոճումը գեպի աջ: Մյուս կողմից՝ ճգնաժամն ակտիվացնում եր այն խավերին, վորոնք մինչև ճգնաժամը միայն հանդիսանում եյին

բուրժուական դիկտատուրայի քվեարկող մեքենան: Մինչև 1914—1918 թ. թ. համաշխարհային պատերազմը մանր խանութպանը դրադիում եր իր վաճառասեղանով, ակտիվորեն չխառնվելով մեծ քաղաքականությանը, նրա վորդին՝ Բեռլինի ուսանողը վարժվում սուսերամարտության մեջ և յերազում եր դառնալ պրոեսական պետական ապարատի կոլեգիական ասեստոր. մանր արհեստանոցատերը շտապում եր վեր բարձրանալ կապիտալիստական յերարխիայի աստիճաններով, ժամանակ չկորցնելով նրա համար անպտուղ քաղաքական խոհերի վրա. գերմանական կուլակը կապիտալիստական իրավակարգի հենարանը հանդիսանալով, մինչև յատակն եր սուզում մանր գյուղացիներին: Կապիտալիզմի ճգնաժամը խախտեց այս խավերի տնտեսական դրությունը: 1933 թվին նրանք դրված եյին մի հարցի առջև, թե ո՛ւմ հետեից դնալ:

Սոցիալիզմն այլևս մի վերացական իդեալ չե, վորպիսին նու եր մինչև 1914 թ. պատերազմը: Սոցիալիզմն ու կապիտալիզմը, — սրանք համաշխարհային յերկու մարտնչող սխտեմներ են, վորոնց միջև ընտրություն պիտի կատարել: Յեվ ամենուրեք կապիտալիտական յերկրներում դասակարգերն անում են իրենց ընտրությունը: Ընտրություն են անում կապիտալիստական ամբողջ աշխարհի պրոլետարիատն ու միլիոնավոր աշխատավորները, ընտրություն են անում և մյուս դասակարգերը: Խանութպանը չի ուզում «ծառայող» դառնալ պրոլետարական դիկտատուրայի ժամանակ, վորովհետև Հերբելը խոստացել ե նրան հավերժացնել նրա դրությունը ունիվերսալ վաճառատները փակելով. կուլակը չի ուզում լիկվիդացիայի յենթարկվել իբրև դասակարգ, վորովհետև նա հույս տալի հասարու (ռանտյե) դառնալ կապիտալիզմի ժամանակ. արհեստանոցատերը չի ուզում բանվոր դառնալ ձեռնարկության մեջ, վորովհետև նա ուզում ե կրել Կրուպպի ու Տիսսենի գործածված սերթուկը: Յեվ Բեռլինի ուսանողը, Պլեյելի ժամանակների քիշինեյան ջարդարարի նման, դուրս ե նետում Վեդդինգի բնակարանների բանվորության բարձերի բմուլը, վորովհետև Հերբելսը նրան ստել ե, վոր նա ամեն որ խոդի միս կուտի, յեթե բանվորն ու նրա յերեխաներն ամեն որ հաց չուտեն:

Յեւ վ կործանվող դասակարգերի այս դադանացումն այնքան ավելի յն սաստկանում, վորքան սրվում է դասակարգային պայքարը կապիտալիստական յերկրներում, վորքան արագ է համաշխարհային պրոլետարիատը թե՛ կապիտալի դեմ մղած իր պայքարով և թե՛ առանձնապես ԽՍՀՄ սոցիալիստական շինարարության հսկայական հաջողութուններով պրոլետարական հեղափոխության կողմը նվաճում դյուղացիության, քաղաքային չքավորության ստորին խավերը, ծառայողների ստորին կատեգորիաները և ինտելիգենցիայի լավագույն մասը:

Բուրժուազիայի բանակում տեղի ունեցող ներքին կռիվը, վոր ուղեկցվում է բուրժուական դեմոկրատիայի սնանկացումով, արդեն կապիտալիստական մի շարք յերկրներում վերածում է համադաշին ճգնաժամի, այսինքն այնպիսի ճգնաժամի, յերբ մասսաների կուտակված դժգոհութունն ընթանում է վոչ թե Փաշլովի հուժով, այլ ուղղվում է կապիտալիզմի հենց սխտեմի դեմ: Թե՛ բուրժուական իշխանության սկսվող քայքայումը, թե՛ համադաշին հեղափոխական հասունացող ճգնաժամի տարրերը հենց այն հիմնական հատկանիշներն են, վոր հատուկ են ներկայիս ընթացիկ մոմենտին, վորոնք այս մոմենտը տարբերում են այն դրությունից, վորի մեջ պտնվում եր կապիտալիզմը համաշխարհային տնտեսական ճգնաժամի շրջանը մտնելուց առաջ:

1929 թ. Կիյվի X պլենումի ժամանակ մենք հեղափոխական վերելքի աճումը չափում եյինք գործադուլների, քաղաքական ցույցերի քանակով, իրրե կապիտալիզմի սրվող դրության առավել տիպիկ ցուցանիշների: Յեւ հենց այն պատճառով, վոր այս ժամանակից սկսած հեղափոխությունն առաջ է գնացել, և վոչ թե հետ, այսօր, 1934 թ. դասակարգային շիկացած հակասությունների մոլորման մեր չափադիզող դրմիջը վոչ միայն գործադուլներն են ու ցույցերը, այլև հեղափոխական ճգնաժամի մյուս տարրերի աճումը կապիտալիստական ամեն մի առանձին յերկրում:

## Հեղափոխական ճգնաժամի աճումն անհամաչափ է տեղի ունենում առանձին յերկրներում, կապիտալիստական սխտեմի առավելապես ուժեղ ողակներում՝ ՀԱՄՆ-ում, Ֆրանսիայում ու Անգլիայում՝ այսպես կոչված բուրժուական դեմոկրատիան դեռևս ամբողջովին չի սնանկացել: Այստեղ բուրժուազիայի համար դեռևս ամբողջովին չի վերացել բանվորական արխտոկրատիայի վերնախավը կաշառելու հնարավորությունը: Այստեղ բուրժուազիան դեռևս կարող է միջև հեղափոխական մեծ ցնցումները թույլ տալ իրեն դեմոկրատիայի և բուրժուական կուսակցությունների պայքարածնության ճլորթու խաղի շոյությունը: Շարժումն այստեղ առերևույթ տնտեսական բնույթ է կրում, լայց յերբեմն այնպիսի փոթորկահույզ ձևեր է ընդունում, վորոնք հիշեցնում են ցարիզմի շրջանի մեր ուսանական գործադուլներն ու ցույցերը:

Ֆրանսիայում, որինալ, Լիւում ու Ստրասբուրգում նա ուղեկցվում է բարիկադների կառուցումով:

Վերցնեք ՀԱՄՆ: Տասնյակ և հարյուր հազարավոր ջուհակներն ու հանքագործների մասսայական գործադուլները 1931—1932 թ. թ. ընթացքում: 1933 թ. առաջին կիսամյակում գործադուլային շարժումը թե՛ գործադուլավորների քանակով և թե՛ կորցրած օրերի քանակով հասնում է 1919 թ. ոեկտրդային մակարդակին: Նույն ՀԱՄՆ-ում 1932 թվի Ֆեբրեարական շարժումը, վոր ընդգրկեց 11 նահանգ և մեկ միլիոնից ավելի Փեմեր, դայրացած Փեմերները ողակում են քաղաքները, գործադուլներ են հայտարարում, կանգնեցնում են սլարեն կրող ալտոշարքերը: Միևնույն ժամանակ՝ պատերազմի նախին մասնակիցների մասսայական շարժում, վետերանների արշավ դեպի Վաշինգտոն և գործադուլների մի շարք արշավներ:

Բայց ահա Անգլիան՝ ավելի թույլ մի ողակ իմպերիալիստական շղթայի առավել ուժեղ ողակների մեջ: Անգլիան, աշխարհի ամենապահպանիղական այս յերկիրը, վորտեղ 1933 թ. կոմունիստներին դատում են 1350 թվի թագավորական եղիկտեղի հի-



ման վրա, արդեն մի քանի տարի անընդհատ տեղում է։ Արդեն 1926 թ. ընդհանուր գործադուլը ցույց տվեց, վոր Անգլիայի բանվորական շարժման մեջ մեծ տեղաշարժեր են կատարվում անգլիական բանվորական արևմտեկրատիայի արստոյալ դրության իսխաման առնչությամբ։ 1931 թ. աշնան անցքերն այս պրոցեսների դարգացման յերկրորդ գլուխն էյին։

Դուք, ընկերներ, հիշում եք այս անցքերի հիմնական մոմենտները. 1931 թվի ամսոր համաշխարհային տնտեսական ճգնաժամի բրման հետեանքով պետական սնանկացման նախադռնը կանդնած բանվորական կառավարությունը 10 տոկոսով իջեցրեց բոլոր պետական ծառայողների ոռնիրը։ Մասսաներն արձագանքեցին սրան հսկայական շարժումով, վոր հիշեցնում էր չարտիզմի լավագույն որերը։ Յուլց են անում բանվորները, գործադուրկները, պետական ծառայողները, փոստային աստիճանավորները, մոնիցիյալ հիմնարկների աշխատողները, ուսուցիչները և այս ամենին իբրեւ լրացում՝ Եւրոյիսկ անգլիական «բորբինները», վորոնք իրենց ուտինե մահակները մի կողմ են դրել մինչև ավելի աուրյա պրոգայիկ որերը։ Եարժումն տարածվում է քաղաքից քաղաք—Լոնդոն, Գլազգո, Լիվերպուլ։ Սնպտեմբերի 14—ին Ինվերգորդոնում տեղի յե ունենում այն, ինչ Անգլիան չի տեսել իր վողջ պատմության ընթացքում. նրա նախատորմը՝ բրիտանական իմպերիալիզմի պարծանքը, նրա ծովային հզորության զենքը, հրաժարվում է մարտական հրամանը կատարելուց։ Ի՞նչ է սա, ասպտամբությո՞ւն։ Վո՞չ։ Սա դեռևս բացահայտ ասպտամբություն չէ։ Նավագները նալի տախտակամածի վրա նստած ծխում են ծխամորժ. սպաների յերեսին մեղմորեն սուրում աղղային հիմնը և կոկորդի ամբողջ ուժով յերգում «կարմիր դրոշակ»։ Նավատորմը մի քիչ բարձրացավ,— իր արժեքի քաղորդի չափով բնկավ ֆունտը... Նավատորմը հանդարտվեց, բայց ֆունտը միայց այս սահմանի վրա։

Անգլիական բուրժուազիան ժամանակավորապես հաղթահարեց նավատորմի ղեգոհությունը։ 1931 թվի անցքերը դեռևս այսպես կոչված բուրժուական դեմոկրատիայի ճգնաժամ չստեղծեցին։ Բայց շարժումն Անգլիայում այնպիսի չափեր ընդունեց, վոր յեր-

կիրը դռնվում էր համաղղային հեղափոխական ճգնաժամի նախորդակին։ Այդ ժամանակից սկսած շարժման թափը մի քիչ թուլացավ, բայց նա չէր դադարում նաև 1932 թ., Լոնդոնում, Բելֆասում ու Բիրկենհեմում վերածվելով հարյուր հազարների ցույցերի։ Նա չէր դադարում նաև 1933 թվին։ Յեւ այսօր նա կրկին բարձրանում է վոչ միայն անգլիական բանվորների համար այնպիսի ասուլի միջոցի շուրջը, վորպիսին կարիքավորության ստուգումն է, այլև Անգլիայում մտցվող հարկադրական աշխատանքի ճամբարների և մունիցիպալիտետներից գործադուրկներին նպաստ բաշխելու իրավունքը խլելու շուրջը։ Բայց Անգլիան Կուրա չէ և վոչ էլ Զիլի։ Նա իշխող պետություն է համաշխարհային իմպերիալիստական սխտեմում։ Նրա թափահարումը վճռական նշանակություն կունենա կապիտալիստական սխտեմի հեղափոխական ճգնաժամի հասունացման տեմպն արագացնելու համար։

Այնուհետև, վերցրեք կապիտալիստական աշխարհի այն մասը, վզրոեղ արդեն կամ հաստատված է ֆաշիստական դիկտատուրա, կամ Գերմանիայում, ֆաշիստական դիկտատուրա հաստատվելու աղեկեցության տակ արագ տեմպով տեղի յեն ունենում ֆաշիզացման պրոցեսներ։ Այստեղ, ինչպես ասված է ԿիԳԿ 13-րդ պլենումի թեզիաներում. «կապիտալիստներն արդեն իվիճակի չեն իրենց դիկտատուրան պահպանելու պարլամենտարիզմի և աուհոտարակ բուրժուական դեմոկրատիայի հին մեթոդներով» և «հարկադրված են սրա հետեանքով անցնելու բացահայտ տերրորիստական դիկտատուրայի»։ Բայց ֆաշիստական դիկտատուրայի անցնելով բուրժուական իշխանության ճգնաժամը չի վերանում,— նա խորանում է։ Վոր դերմանական ֆաշիզմը լիկվիդացիայի յենթարկեց Վեյմարի սահմանադրությունը, դրանով նա չվերացրեց բուրժուական իշխանության ճգնաժամը Գերմանիայում։ Գերմանական ֆաշիզմը գործում էր Կոկորդի Տրիչկա գործող անձնավորության սկզբում։ Բուրժուական դիկտատուրայի ցած ջնկնող բաճկոնն ամբողջնելու համար նա ստիպված էր կտրել նրա սոցիալական փելչերը։ Յեւ այստեղ բան այն չէ միայն, վոր վոչ արիական ծագումով բուրժուալիայի մի մասը և կաթոլիկ տերոեղները Գերմա-

նկայում անցնում են Փաշիգմի ոսկոյիցեայի դերքերը: Բուրժուա-  
կան դիկտատուրան, աքացի տալով սոցիալ-դեմոկրատիայի մեջ-  
քին, ռուսական ցարիզմի նման, վոր մերժում էր լիբերալների ու  
կադետների ոժանդակութունը, նեղացնում է իր մասսայական  
պատմանդանը և ավելի դրոշմում դեպի անդունդը:

Այս յերկրներում Փաշիգմը տերրորիստական դիկտատուրայով  
ժամանակավորապես կասեցնում է մասսայական մեծ շարժումների  
պոթիկումը: Յեւ վայելում են հայերի, Նույն Գերմանիայում դոյու-  
թյուն ունեն հեղափոխական յելույթներ, վորոնց նշանակութունը  
հարյուրապատիկ ավելի մեծ է, քան այն յերկրներում, վորտեղ  
շարժումը կրում է լեզալ ձևեր:

Լեհաստանում Փաշիստական դիկտատուրան այլևս չի կարող  
դադարեցնել դորժադուլային շարժման անընդհատ աճումը, վոր  
անչեղ ընթացքով դիմում է դեպի ընդհանուր դորժադուլ Լեհաս-  
տանում: Նա չկարողացավ կասեցնել վոչ 1931 թ. դյուդացիական  
ապստամբութունն Արևմտյան Ուկրաինայում, վոչ 1932 թ.  
հարյուր հազարավորների ապստամբութունը Կրակովի հասան-  
գապետության մեջ, այսինքն բուն Լեհաստանում: Մի ինչ-վոր  
փոքրիկ Հունտտանում բուրժուազիայի այս տարվա մարտի 6-ի  
փորձը հաստատելու դեներալ Պրաստորիսի Փաշիստական դիկտա-  
տուրան, 24 ժամում խափանվում է Աթենքի փողոց դուրս յեկած  
բնակչության միջոցով: Իր դոյության տաս տարում իր ապարատն  
ամբողջած իտալական Փաշիստական դիկտատուրան չի կարողա-  
նում արգելք հանդիսանալ վոչ դորժադուլների շարժմանը, վոչ  
դյուդացիական բատրակների դորժադուլներին, վոչ ռազմա-  
կան նախահանդիստ Սպեցիայի դորժադուլին: Ռուսիական սի-  
դուրանցիայի բոլոր դիվահարություններն անդոր դուրս յեկան  
Բուքարեստի ռումինական Լեհան կասեցնելու համար, վոր այս  
տարվա փետրվարին ուղեկցեց 500 հոգու զնգակահարությամբ և  
2 հազ. ապստամբ յերկաթուղայինների ձերբակալությամբ: Յեւ  
արդեն այս առանձին դուրս պոկված փառերը պարզ պատկերա-  
ցում են տալիս այն մասին, թե վորքան պայթուցիկ նյութ է կու-

տակում Փաշիգացող յերկրներում և Փաշիստական դիկտատուրայի  
յերկրներում:

Այնուհետև վերցնենք կապիտալիստական սխտեմի ամենա-  
թույլ ողակները: Ի՞նչ ենք տեսնում մենք այտեղ: Հեղափոխու-  
թյուն Չինաստանում և Իսպանիայում: Բայց Չինաստանի հեղա-  
փոխությունը, սա հեղափոխություն է մի հոկայական յերկրում,  
վորտեղ խաչածեղ են իմպերիալիստական սխտեմի բոլոր հակա-  
դությունները: Շղթայի այս ողակի ճեղքումը տատանում է իմ-  
պերիալիզմի համաշխարհային ամբողջ սխտեմը: Իսկ այս ճեղքու-  
մը սկսվեց խորհրդային Չինաստանի դոյացումից, վորի ուժերն  
աճում ու ամրանում են որեցոր: Խորհրդային Չինաստանը,—դա  
իմպերիալիզմից ճզմված դադութների ու կախում ունեցող յերկր-  
ների վաղվա որն է:

Իսպանիա: 1931 թ. ապրիլի 14-ին ելի մի թաղ է թռչում միա-  
պետի գլխից և ընթանում աղբարկղը: Անգլիայի այսպես կոչված  
բանվորական կառավարությունը պետք յեղած դեպքում ուղապոր-  
ծելու համար կանխատեսներն իր մոտ է քաշում սնանկացած պա-  
կակիր Ալֆոնս XIII-ին: Վոտքի կանգնած բանվորների ու դյուդա-  
ցիների ուսի շարժումով չուռ է գալիս ռազմատերրորիստական  
դիկտատուրան, դեմոնական ու իտալական Փաշիգմին ցույց տա-  
լով նրանց վաղվա որը:

Հնդկաստան: 1930 թ. նոյեմբեր: Փեշվար, վորտեղ բնիկ  
դինվորներն իրենց հրացանները հետ դարձրին անգլիական սպանե-  
րի դեմ: Նույն թվին ապստամբություն Ծոլապուրում: Դադալը  
միջանի որ գտնվում է բանվորական միությունների ձեռքին:  
Ամբողջ 1932 թվին—դյուդացիական անընդհատ ապստամբություն-  
ներ Բիրմայում, Միացյալ պրովինցիաներում, Բենգալիայում:  
1933 թվին դյուդացիական ապստամբությունները շարունակվում  
են:

Մյուս ցամաքում—Լատինական Ամերիկայի յերկրներում:  
1931 թ. սեպտեմբեր: Չիլի—ռազմական նախադրմի տարերային  
ապստամբություն: 1932 թ. հուլիս—խորհուրդների ստեղծում  
Նույն Չիլիում, վորոնք դիմացան 11 ու: 1933 թ. ուղիստա—տգու-

տոսի 1-ի հակապատերազմյան ցույց շարժում Կուբայում, վոր վերածում է ընդհանուր գործադուլի ու հեղափոխության և այլն:

Ինչն է խանդավառում գաղութների ու կախում ունեցող իրավունքների չհանդարտվող շարժումներին, վորտեղ հասունացել են հեղափոխական ճգնաժամի որոշակիորով նախադրյալները, վերածվելու գաղութային հաղթական հեղափոխության: Խանգարում են այս յերկրների կոմունիստական կուսակցությունների թուլությունն ու յերիտասարդությունն, դավաճանական նացիոնալ-ոնֆորմիզմի ղեկուս պահպանված ազդեցությունը և ամենից առաջ համաշխարհային իմպերիալիստական սխտեմի հրեշավոր ճնշումը, վոր կիրառում է ճնշման այնպիսի յեղանակներ, վորոնք իրենց մեջ միացնում են միջնադարի տաճանները, ինկվիզիցիայի խարույկները նորագույն տեխնիկայով հանդերձ՝ ողից ոմբակոծելով, դադեր գործածելով և այլն: Յեթե չլիներ իմպերիալիզմի այդ հրեշավոր ճնշումը, ամբողջ Չինաստանը վաղուց խորհրդային կյիներ և Հնդկաստանը դուրս կընկներ բրիտանական իմպերիալիզմի սխտեմից:

Բայց, ընկերներ, կապիտալիստական առանձին յերկրներում արդեն սկսում է տատանվել նաև այն ղինված ուժը, վորի վրա հենված կառավարող դասակարգերը փորձում են արգելակել մասսաների հեղափոխական շարժումը: XVI համագումարից հետո անցած 3 1/2 տարիները բնորոշվում էյին բանակներում տեղի ունեցող խմորումներով, վորոնք առանձին վայրերում ընդունում էյին բացահայտ ապսամբություն ձև: Ավելի ու ավելի հաճախակի յեն դառնում այն դեպքերը, յերբ ղինվորները յեղբայրանում են գործադուլավոր բանվորներին: Այսպես եր Ֆրանսիայում, այսպես եր Բելգիայում՝ Բորինաթի հանքագործների գործադուլը ժամանակ, այսպես եր և մյուս յերկրներում: Կթվարկեմ միջանի առանձին դեպքեր:

Ճապոնիա: Հարձակում Շանհայի վրա 1932 թ. փետրվարին: Ճապոնական լրագրերը, կորցնելով ծիծաղելիության զգացումը, հաղորդում են, թե Չապեյի տակ մոտ 600 ճապոնական ղինվորներ ու նավաստիներ այնքան են «կարոտել հայրենիքին», վոր

հարկ ղդացվեց նրանց չտալ տեղափոխել Տոկիո: Այժմ Մանջուրիայի ճապոնական ուղևորացրոն բանակից մոտ 260 ղինվոր և սպա գտնվում են դատի տակ, մեղադրվելով «վտանգավոր մտքերի» համար:

Բուլղարիա: 1933 թիվ: Կոմունիստական ռադական կադմակերպության մասնակցած 50 ղինվորի մահավճիոր: Դատավարությունները շարունակվում են 1934 թվին:

Շվեյցարիա: 1932 թվի նոյեմբեր: Անդորր ժրնեփում, Ադդերի Լիդայի ռեզիդենցիայում, սքանչելի ռթներբի ու կայուն ժրանկի քաղաքում ցույց ցրելու համար հանված ղինվորների յեղբայրացում բանվորների հետ, ղինվորների չտալ վերադառնալի հետ, ղորանոցները և այնտեղից սպաների ղհոսցրում համադարկեր մոտեցող ցույցի վրա: 12 սպանված, 65 վերավոր:

Շուլանդիա: 1933 թվի փետրվար: Իմպերիալիզմի ու դաստնների սահմանագլխին՝ Սուբարայում յերկարատե հուղմունքներ ինդոնեզիայում տեղափորված հոլանդական նավատորմի անձնակազմի մեջ, 1933 թվի փետրվարի 5-ին ռադական խոսարացում հաճախով «Յոթ Նահանգները» վերադադրում են «Պոտլոմեններ» դյուցազներգությունը: Մնացած նավերի ղորախմբերի բացահայտ համակրանքի հանդեպ դեպի սպստամբ նավագները հոլանդական կառավարությունը սեփական հաճախովի վրա կատարում է ողածովային պատերազմի արյունահեղ փորձ:

Ընկերներ, թող վոր այս շարժումները ղնուս հասցրած չլենեն հաղթություն: Բայց չե՞ վոր առանց «Պոտլոմենների» «Այրուս» յել չեր լինի: Այսպիսի շարժումների որինակով աճում ու ամրանում են կոմունիստական կուսակցությունները, հեղափոխում ղիտությունը սովորում են ամենայն մասունները, և սովորում են ստանձին արագությունը, վորովհետև ամժմ կապիտալիստական յերկրներում 1905 թ. «Պոտլոմենից» ճախարհն ավելի չուս և հասցնում 1917 թվի «Այրուսին», քան այս տեղի ունեցավ ցարական Ռուսաստանում:

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐՈՒՄԱՆ ՆԵՐԿԱՅԻՍ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Յեթե ամբողջելու լինենք համաշխարհային հեղափոխական շարժման ներկա կացութիւնն առաջ պետք է անել հետեւյալ յեղրակացութիւնները:

Նախ և առաջ առկա յե կապիտալիստական սխտեմի այնպիսի խարխլածութիւնն նրա թույլ ողակներում, վոր այդ յերկրներից մեկում հաստեանում է, մյուսներում արդեն հաստեանացել է «վերնախաւերի» ճշմարտութիւն և սկսում է վերաճել համաղղային հեղափոխական ճշմարտութիւն: Բայց դեռևս չկա կապիտալիստական ամբողջ սխտեմի այնպիսի խարխլածութիւն, վորը ստեղծեր իմպերիալիստական շղթան նրա թույլ տղակներում անմիջականորեն ճեղքելուն նպատակով պայմաններ: Բուրժուազիայի քաղաքական դերիչխանութիւնը խախտվում է, բայց անհամաչափ: Նա առայժմ ամենից քիչ է խախտված ՀԱՄՆ-ում, Ֆրանսիայում և մասամբ Անգլիայում, ամենից ավելի՝ գաղութներում և Ֆաշիստական յերկրներում: Ֆաշիստական դիկտատուրայի հաստատումը հանդիսանում է մի միջանկյալ կայան հեղափոխական ճշմարտութիւն հետագա հաստեանացման մեջ:

Յերկրորդ, ընկերներ, առկա յե մասսաների այնպիսի խոր դժգոհութիւն, այնպիսի վրդովմունք նրանց կապիտալիստական ստրկութիւնից, վորն արդեն այսօր սպառնում է բուրժուազիային տապալելու նրա դիկտատուրան: Մյս դժգոհութիւնն արտահայտվում է անհամաչափ, տարբեր ժամանակներում, հեղափոխական շարժման ամենաբազմազան ձևերով՝ Գերմանիայի մանր, ցածր ու ցրվի ցույցերից ու տնտեսական գործադուլներից մինչև գաղութների պարտիզանական պատերազմը, մինչև բանակի հուզմունքներն ու բացահայտ զինված ապստամբութիւնները: Սակայն կապիտալիստական յերկրների ճնշող մեծամասնութիւնն մեջ հարկադրանքի պետական սպարաւոր դեռ այնքան խախտված չէ, բուրժուական դիկտատուրայի մասսայական սթաւմանդանն անքան խորտակված չէ, իսկ մասսայական հեղափոխական շարժումը

դեռևս այնքան ուժեղ չէ, վոր նա կարողանա բացահայտ կերպով ճեղքել ու ներս մտնել բուրժուազիայի տառանկել սկսած զինված ուժի ավիւնների վրայով ու ավիւնների միջով: Սրա հետեանքով բուրժուազիան տերրորիստական միջոցառումներով խորացնում է մասսաների դժգոհութիւնը, բայց հենց սրանով նա պայմաններ է ստեղծում հակայական ուժեղութիւնն պայթիւնների համար, վորոնք ամեն րոպե կարող են արագացնել հեղափոխական ճշմարտութիւն ամման տեմպը: Հեղափոխական պայթիւնների «անսպասելիութիւն» ու «անակնկալութիւն» այս մոմենտը հանդիսանում է ներկայիս ամբողջ իրադրութիւնն բնորոշ առանձնահատուկ դիմը:

դեմոկրատիայի, առանձնապես նրա այսպես կոչված ձախ մասի աղվեսախաղերի նրբութուններում և հաճախ միասնական ճակատի տակտիկա վարելիս ընկնում են սարքած թակարդի մեջ: Այսպիսի թակարդի մեջ ընկան, որինակ, ֆրանսիական ընկերները 1932 թվի սկզբին, յերբ նրանք Բլյունների հետ բանակցություններ հորինեցին «միասնություն» վերացական թեմայով դիպուկ սխառների վերաբերյալ, վոխանակ բանվոր դասակարգի այս միասնությունը կենսագործելու բոլոր աղբյուրությունների բանվորների միատեղ պայքարով ընդդեմ կապիտալի հարձակման: Ֆրանսիայի կոմունիստները չնկատեցին, վոր այդ բանակցություններով նրանք թուլացրին կուսակցության դրոշմ սոցիալ-դեմոկրատիայի վրա, և սա այն մոմենտին, յերբ դերմանական սոցիալ-դեմոկրատիան լայնորեն դռները բացել ևր ֆաշիզմի առջև և յերբ 2-րդ Ինտերնացիոնալը մեծագույն չփութության մեջ եր: Ժրենվի կազմակերպությունը Շվեյցարիայում հենց նրա համար չկարողացավ ժրնելի դեդալահաբությունից հետո աճած իր աղբյուրությունն ամրապնդել բանվորական մասսաների մեջ, վոր նա ժամանակին հալահարված չտվեց աջ ուղորտունիստ Եմբեր-Դրոյի գծին, վոր կազմակերպությունը քարշ եր տալիս դեպի «ձախ» սոցիալ-դեմոկրատ Նիկոլիի դեմ մղվող պայքարի թուլացումը: Իսկ այս աջ ուղորտունիզմն այսոր մանավանդ գլխավոր վտանգն և հանդիսանում այն պատճառով, վոր հատվածների բաժանված սոցիալ-դեմոկրատիայից ճյուղավորված «ձախ» խմբիկները վործում են սոցիալ-դեմոկրատական բանվորների հեղափոխականացումը կասեցնել «ձախ» ռեֆորմիստական միջանկյալ պլատֆորմներով, ինչպես անգլիական անկախական Բրոկվիլի պլատֆորմը: Յեթ յեթե սոցիալ-դեմոկրատիայի ներկայիս ճգնաժամը այսոր ամեն սուր ձևեր չընդունեց, ապա այն պատճառով, վոր 1933 թվի դարնանը կոմիստներին սեկցիաները դերմանական սոցիալ-դեմոկրատիայի սնանկացումից հետո բալականաչափ յեռանդով հարձակման չանցան 2-րդ Ինտերնացիոնալի դեմ, նրանք բալականաչափ չողտադործեցին սոցիալ-դեմոկրատիայի մերժումը կոմիստների մարտի 5-ի առաջարկին, վորալիսդի բարձրացվի կապիտալի դեմ

Հեղափոխական պայքարի միասնության ծարավի ամբողջ աշխարհի բանվորների վրդովմունքի ալիք:

Բայց, ընկերներ, այս թուլութունները չեն կարող մթաղենել այն նվաճումները, վոր ձեռք ե բերել Կոմինտերնը XVI Համագումարից հետո անցած 3½ տարում իր սեկցիաների մասնայայտական պատվանդանն ընդարձակելու գործում:

## ՉԻՆԱԿԱՆ ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Այս նվաճումների մեջ առաջին տեղը Համկ(բ)Կ-ից հետո, ամտարակույս, պատկանում ե չինական կոմկուսակցությանը, վորի մարտական ակտիվությունը շատ մեծ դեր ե խաղում Հեղափոխական ճգնաժամի հասունացումն արագացնելու մեջ: Չինական կոմկուսակցությունը նվաճել ե վոչ միայն բանվոր դասակարգի մեծամասնությունը, այլև խորհրդային չրջանների աշխատավորության մեծամասնությունը: Վոչ-խորհրդային չրջանների արդյունաբերական կենտրոնների պրոլետարիատի ե գյուղացիության վրա նրա ազդեցությունն աճում ե ամեն ամիս ե ամեն շաբաթ: Կոմունիստական ազդեցության այս աճումը Չինաստանում իր արտահայտությունն ե դուր չինական կոմկուսակցության քանակական մեծացման մեջ, վոր մի տարում աճել ե 120 հազարով ե ներկայումս ունի 416 հազար անդամ (ծափահարություններ):

Այստեղ Հանդես ե դալու չինական կոմկուսակցության ներկայացուցիչ ընկ. Վան Մինը, վոր մանրամասն կպատմի այս հաջողությունների մասին: Միայն կնչեմ, վոր խորհրդային կենտրոնական չրջաններում լույս տեսնող, խորհրդային մյուս չրջաններում արտատպվող ե վոչ խորհրդային Չինաստանում անլիզալ արտատպվող չինական կոմկուսակցության կենտրոնական որդանի տիրաժը, ընկեր Վան Մինի հայտարարությամբ, հաճախ հասնում ե կես միլիոնի (ծափահարություններ),—մի տիրաժ, վորի մասին յերբեք չեն յերազել վոչ Ֆաշիստական «Անդրիֆը», վոչ ել «Վոլկիչեր բեռախտերը» Գերմանիայում: Չինաստանի կոմկուսակցությունը վոչ-խորհրդային չրջաններում իր 60 հազար ան-

դամներով այժմ Գերմանիայից հետո ամենախոշոր ընտհատակյա կուսակցությունն ե, վոր վերջին տարում մեծացել ե 40 հազար անդամով (ծափահարություններ): Այս կուսակցությունն արդեն կառավարում ե խորհրդային մի պետություն, վոր ընդգրկում ե 700 հազար քառ. կմ. տերիտորիա, այնինքն ավելի մեծ յերկիր, քան Ֆրանսիան կամ Գերմանիան, կամ վորնե ալ իմպերիալիստական պետություն, բացառությամբ ՀԱՄԵՆ-ի: Նա զինված ուժ ունի Հանձին չինական կարմիր բանակի, վորի կանոնավոր զորամասերն ունեն 350 հազար մարտիկ (ծափահարություններ) ե պարտիզանական զինված ջոկատները՝ մոտ 600 հազ. մարտիկ (ծափահարություններ): Այս բանակը, վոր իր ամենախաթար թշնամիների խոստովանությամբ ամենալավ բանակն ե Չինաստանում, կազմված ե 30 տոկոս բանվորներից ե իր որինակելի զորամասերում ունի մոտ 50 տոկոս կոմունիստներ (ծափահարություններ):

Չինաստանի յերկտասարդ կոմկուսակցությունը ներկայումս աճում ու դառնում ե Կոմինտերնի լավագույն սեկցիաներից մեկը նաև այն պատճառով, վոր թե՛ նա ե թե՛ նրա կարմիր բանակը անցել են քաղաքացիական պատերազմի բազմամյա դուրսը, վորի ժամանակ նրանք կոփել են թե՛ կուսակցական ամուր կադրեր ե թե՛ տաղանդավոր զորավարների ու մարտական հրամանատարների մի ամբողջ պլեադա (ծափահարություններ): Չինաստանի՝ քաղաքացիական պատերազմում կոփված կարմիր բանակը արդեն հետ ե մղել Չան-Կայ-Շիի 5 արշավանքները: Վերջին, Հինգերորդ արշավանքի ժամանակ, յերբ նրա դեմ գործում եյին Չան Կայ-Շիի 57 բնակիչ դիվիզիաները, վորոնք կալվածատիրական-պատժիչ զորամասերի ու կուլակային բանդանների հետ միասին կազմում եյին մոտ 600 հազար սվին, նա գլխովին ջարդեց 17 դիվիզիա, հետ մղեց 40 դիվիզիայի հարձակումները, գերի վերցրեց մոտ 80 հազար մարդ ե 1933 թ. հունվարից մինչև ապրիլ թշնամուց խլեց 140 հազար հրացան, 1390 հաստոցային ու թեթև զնդացիք, 20 ուղիոսարք, 6 սավառնակ ե գրավեց 79 նոր գավառ:

Ձայներ.—Բռավո (ծափահարություններ):

Բուրնով.—Ա՛յ քեզ հաղթանակ:

Մասնաւոր իշխանի. — Այսպիսի բանակն ու այսպիսի կուսակցութեան, ընկերների, արդեն մի խոշոր ֆակտոր են Հեռավոր Արեւելքի ուժերի հարաբերակցութեան մեջ:

Այժմ այս բանակը հետ ե մղում Չան Կայ-Շիի 6-րդ արշավանքը, վերտեղ նա ստիպւած ե պայքարել թշնամու գերազանց ուժերի դեմ, վերոնք գործում են գններալ Սեկտի մշակած պլանով ե ոժտւած են ռազմական նորագոյն տեխնիկայով, ամերիկյան սալառնակներով, անգլիական տանկերով ու զրահապատներով ե ֆրանսիական հրետանիով:

Բայց այս արշավանքն ել առայժմ հանգել ե այն բանին, վոր կարմիր բանակը Սիչուանում գրավել ե 15 նոր գավառ, ե չինական ընկերները համատեցած են, վոր այս արշավանքը կվերջանա Չան Կայ-Շիի պարտութեամբ ու չինական կարմիր բանակի տեխնիկական վերադիմումով ի հայտ թշնամու (փոքրիկ Ժափահարութեան):

Նա կվերջանա Չան Կայ-Շիի պարտութեամբ այն պատճառով, վոր չինական կոմկուսակցութեանն ու կարմիր բանակը հագեցած են այն բանով, ինչ չունի թշնամին՝ կոմունիզմի ամենահաղթ ուժով ու Չինաստանի աշխատավոր մասսաների անձնուրաց ոժանդակութեամբ (յերկարատե ծափահարութեան):

Այն շրջաններում, վորտեղ տեղի յեն ունենում ամենահամառ կռիւներ, կարմիր բանակին պաշտպանում ու սպասարկում ե ամբողջ բնակչութեանը՝ բանվորները, կուլինները, գյուղացիք, առևտրական ծառայողները, ձկնորսները, փողոցային մուրացիկները, կանաք, յերեսանները:

«Առաջին հայացքից կարող ե թվալ, — իր ինտերվյուներից մեկում ասել ե Չան Կայ-Շին, — վոր 100 լի տարածութեան վրա վաչ մի պահակ չկա, իսկ իրականում ամբողջ վայրում նրանք վխտում են: Միվտանի մուրացիկներ, — թվում ե թե միանգամայն անվնաս մի անձնավորութեան, — փաստորեն առաջադրութեանն ունի հազարէլ գաղտնի ազդանշաններ ու տեղեկութեաններ: Լճակի ափին նստած խաղաղ ձկնորսը հանկարծ դուրս ե գալիս զինված պարտիզան»:

Պարտիզանական ջոկատները թշնամուն չըջապատում են բոլոր կողմերից, կատարում են ռազմական գիւղերսխաներ, կրում են հետախուզական ծառայութեան, կազմալուծում են նրա թիկունքը. կարմիրների դեմ գործող գործառնները չըջապատւած են ապստամբութեանների հրե սղակով:

«Կարմիրների դեմ պայքարելու դժվարութեաններէց մեկն այն ե, — գրում ե Շանհայում լույս տեսնող ամերիկյան լրագրիչը, — վոր անկարելի յե աղելի յերկրագործին տարբերել կոմունիստից (ծիծաղ, ծափահարութեան): Այնպեա ե պատահում, վոր կատարական զորքերի ջոկատը հանդիպում ե մի խումբ յերկրագործների ե նրանց իսկական գյուղացիների տեղ դնելով, թույլ ե տալիս նրանց մտնելու գորատեղը: Հանկարծ մի ազդանշանով գյուղացիք դառնում են կոմունիստներ ե կրակ բացում դիմագործների վրա: Կատարական զորքերը մեկ անգամ չեն պարտութեան կրել այսպիսի դավաճանութեան հետևանքով» (ծիծաղ):

Նրանք առաջիկայումն ել պարտութեաններ կկրեն, վորովհետեւ Չինաստանի աշխատավորութեան ամենալայն մասսաներն արդեն խորհրդային շրջանների կոնկրետ փորձով տեսնում են խորհրդային սիստեմի առաջնութեանները: Չինական կոմկուսակցութեանն այս մասսաներին նվաճել ե նրանով, վոր նա մինչև վերջ կատարել ե ազդարային հեղափոխութեանը, հոգուտ ժողովրդի բռնազրաւելով կաշվածատերերի, ջենտրիների ու կուլակների հոգն ու ինվինտարը, վոր նա վերացրել ե չինական գյուղի խոցը՝ վաշխառութեանը, վոր նա չհամայնացնելով առևտուրն ու արհեստագործութեանը, խիստ ռեզրամենտացիայի յե յենթարկում դրանց, վոր նա կազմակերպում ե տալար ու սերմացու չունեցող գյուղացիների համար պետական ու հասարակական ունուութեան, վոր նա զարգացնում ե արդյունաբերական ու վարկային կոոպերացիան, վոր նա ժողովրդական կրթութեանն ու առողջապահութեան գործը հասցրել ե Չինաստանի համար աննախընթաց բարձրութեան: Սա այն կուսակցութեանն ե ե այն իշխանութեանն, վորին հաղարամայիններով սպասում եյին չինական կոմունիստներ, վորին հաղարամայիններով սպասում եյին չինական գյուղացին: Սա դեռևս արդիւտարական դիկտատու-

Դրա չէ, բայց սա կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի չլիզահի պրոլետարիատի առ դյուրացիութեան հեղափոխական-դեմոկրատական դեկտատուրայի մի առանձին ձևն է։ Սա դեկտատուրա չի, յիշե՛ք, կիրառվում է պրոլետարիատի հեղեմոնիայի ստակ և կոմունիստական կուսակցութեան քաղաքական մոնոպոլ դեկալարութեամբ, կուսակցութեան, յիշե՛ք, բուրժուական-դեմոկրատական հեղափոխութեանը հասցնում է մինչև վերջ և նրա պրոցեսում իրագործում սոցիալիստական բնույթի մի շարք միջոցառումներ։ Իսկ այս բոլորը միասին առած ապահովում է այս հեղափոխութեան արագ ձերաճումը սոցիալիստական հեղափոխութեան՝ խորհուրդների իշխանութեանը՝ արդյունաբերական կենտրոնների վրա ընդարձակելու պայմանով։ Չինական բուլժեիկները սովորեցնում են յեվրոպական պրոլետարիատին և մասնավորապես իտալական բանվորներին, թե ինչպե՛ս պետք է կատարել բուրժուական-դեմոկրատական հեղափոխութեանը, վերացնելով հակահեղափոխական այն դասակարգերի տնտեսական պատվանդանն ու քաղաքական իշխանութեանը, յորովք առանց այսպիսի վերացման հետադայում հասնում են ֆաշիստական դիմադի, ինչպես ցույց տվեց Գերմանիայի փորձը։

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԿՈՄԿՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ

Յերկրորդ կոմիտեակցութունը, լոր չինական կոմիտեակցութունից հետո մի քայլ է արել առջ բանվոր դասակարգի մեծամասնութունը նվաճելու համար, հանդիսանում է Գերմանիայի կոմունիստական կուսակցութունը :

Գերմանական կոմիտեոսակցությունը դեռ յերբեք այսպես ընդհուպ չի մոտեցել սոցիալ-դեմոկրատական բանվորներին, ինչպես ներկայումս: Սոցիալ-դեմոկրատիայի զարգացման հետպատե-  
րազմյան ամբողջ շրջանում դեռ յերբեք բանվորներն այնպիսի ազահուլությամբ չեն խել կոմունիստական ամեն մի թուլւցիկ, ինչպես այժմ: Յերբեք Գերմանիայում այնպիսի խոր ձգտում չի յեղել դեպի բանվոր դասակարգի պայքարի միասնական ճակատ

շոր, ինչպես այժմ: Իսկ այս բանը հնարավորություն ե տվել Գեորգիանիայի կոմիտեականությանը, խախտելու Ֆաշիստների պլան-նեհն արհմիություններին տիրանալու վերաբերմամբ:

[illegible]

ՄՅՈՒՍ ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Բանիւրը դասակարգի մեծամասնութիւնը նվաճելու մեջ առ  
ուղ և գնացել ետեւ Լեհաստանի կոմկուսակցութիւնը: Սա ար-  
տահայտիկ և նախ՝ կուսակցութեան ու կոմյերբումիւթիւն քանա-

կական մեծացումով, վորոնք այժմ ունեն մոտ 30 հազ. անդամ, աշխնքն նույնքան, վարքան ունի Պեպեեսի լեզալ կուսակցությունը, յերկրորդ՝ մի շարք խոշորագույն գործադուլների ինքնուրույն կազմակերպումով ու ինքնուրույն ղեկավարութեամբ:

Ֆրանիայում այն դադարի ու նույնիսկ հայտնի հետադարձ շարժման մի շարք տարիներից հետո, վոր տեղի ունեցան կուսակցութեան աւ Աշխատանքի կարմիր կոնֆեդերացիայի քանակական աճման մեջ, վերջին տարում նշվել է վորոշակի տեղաշարժ դեպի ինչպես կուսակցութեան հետագայ մեծացումը, վոր ունի մոտ 40 հազ. կոմունիստ, այնպես եւ կարմիր արհմիությունների հետագա մեծացումը, վորոնք ներկայումս ունեն մոտ 275 հազ. անդամ:

Չեխո-Սլովակիայում, չնայած կուսակցութեանը մղված և ընդհատակ, նա այժմ ունի 55 հազ. անդամ և 90 հազ. հոգի կարմիր արհմիություններում:

Բանվոր դասակարգի մեծամասնությունը նվաճել է Բուլղարիայի հերոսական բանվորական կուսակցութեանը, վոր 1932 թվին անկախաւ Սոֆիայի քաղաքապետութեանը, իսկ սրա հետևանքով անկախ դարձրին ընտրութեանները և հալածանքների կատարելալք բարձրացավ կոմկուսակցութեան դեմ: Մեծ հաջողութեաններ ունի Իսպանիայի կոմկուսակցութեանը, վոր յերեք տարի առաջիւ 800 անդամից աճել ու հասել է 30 հազարի, վորն իր հետեւից տանում է մոտ 300 հազար հոգի արհմիություններում կազմակերպված բանվոր և վերջին ընտրութեաններին ստացել է մոտ 400 հազ. ձայն (Ծափահարութեամբ): Աճում է կոմյունիստութեանը, վոր այժմ ունի 15.000 անդամ, աճում է նրա ազդեցութեանը բանակում, և անչեղորեն աճում է կուսակցութեան ազդեցութեանը գյուղացիութեան վրա:

Այժմ համարյա չկա Կոմինտերնի մի սեկցիա, վորը վերջին 3 1/2 տարում չընդարձակեր իր մասնաշաղկան պատվանդանը: Իր անդամների թիվը կրկնապատկել է ամերիկյան կոմկուսակցութեանը, վոր այսօր ունի 20 հազարից ավելի անդամ: Առանձին

կտրուկ թւիչք են կատարում դեպի վեր քանակապես մանր կոմկուսակցութեանները, ինչպես հոլանդականը, վորոնք կրկնապատկել ու յեռապատկել են իրնց անդամների թիվը: Այս կուսակցութեան թյուններն արդեն դառնում են սոցիալ-դեմոկրատական մեծ կուսակցութեանների լուրջ հակառակորդները, նրանք այժմ չեն վախենում մեծ խնդիրներից, նրանք համարձակ խորանում են ամեն մի մասնաշաղկան շարժման մեջ, նրանք սոցիալ-դեմոկրատների ձեռքից խլում են այս շարժման ղեկավարությունը: Կոմինտերնն այժմ կապիտալիստական յերկրներում ունի 860 հազար կոմունիստ, բայց բանը կոմկուսակցութեանների միայն քանակական աճումը չէ, այլև նրանց արդեցութեան աճումը: Ավստրալիայի մի ինչ-վոր փոքրիկ, հազար հինգ հարյուր հոգուց կազմված կոմկուսակցութեան իր յերկրորդ քարտուղարին անց է կացւում հանքագործների համալստրալիական ֆեդերացիայի գլխավոր քարտուղար ~~Բեռլին~~ յերեք ու կես հազար կոմունիստներից հերոսական վարմունքով ավելի մեծ հարգանք են ներշնչում Բորինստի գործադուլավոր հանքագործներին, քան Վանդերվելդեյի բազմահազար անդամ ունեցող կուսակցութեանը:

Անգլիական կոմկուսակցութեանը վերջին տարիներս համարյա առաջ չի դնացել քանակապես: Բայց յեթե յերկու ամենից արիստոկրատական համալստրանների՝ Ոքսֆորդի ու Քեմբրիջի՝ ուսանողներն ի սարսափ անգլիական ամբողջ բուրժուազիայի բանաձև են հանում, թե պատերազմի ժամանակ նրանք չեն պաշտպանի վոչ թաղավորին, վոչ եւ հայրենիքը, ապա սա մեր կուսակցութեան բաղձամյա հակապատերազմական ազդեցիկայի արդյունքն է: Յեթե անկախ բանվորական կուսակցութեան բանվորներն այժմ հակառակ իրենց առաջնորդների սարսափին՝ բաղխում են Կոմինտերնի դռները, ապա սա հետևանք է անգլիական կոմունիստների մղած հետևողական բուլչեիկյան դժի ծառայութեան:

## ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊԱՅՓԱՐԻ ԴՃՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այնինչ կոմկուսակցությունների ազդեցության այս աճումը տեղի չե ունենում այնպիսի պայմաններում, յերբ կոմինտերնի սեկցիաների ճնշող մեծամասնությունն արդեն գտնվում է անլեզալ դրություն մեջ, և միայն 15 սեկցիա, ներառյալ Խորհրդային Չինաստանը, քիչ թե չատ հնարավորություններ ունեն բացահայտ աշխատանքի համար:

Կապիտալիստական յերկրների մեծ մասում կոմունիստներն աշխատում են ամենադաժան հալածանքների պայմաններում, վորոնք ավելի առաջ են անցնում ցարկովի ճշումներից: Միայն 1933 թվի 8 ամիսներում ձերբակալվել են 238 հազ., սպանվել՝ 46 հազ., վիրավորվել ու հաշմացել՝ մոտ 160 հազ. հոգի:

Կապիտալիստական բանտերում նստած են հարյուր հազարավոր կոմունիստներ, վորոնցից յուրաքանչյուր առանձին յերկրում 24 ժամում կարելի չե կազմել պրոխտարական հեղափոխության ամենաանձնվեր ու ոտուզված մարտիկների մի սքանչելի մարտական կուսակցություն: Միմիայն Գերմանիայում համակենտրոնացման ճամբարներն են նետված մոտ 60 հազար կոմունիստ բանվոր: Լեհական անլեզալ կոմկուսակցությունն ունի 15 հազ. ազատ անդամ, իսկ բանտ նետված Նրա ահտիվիստ անդամների թիվը հասնում է 10 հազարի: Վերջին տարիներս խիստ աճել և առանց դատի սպանվածների թիվն ամբաստանվածների թվի հանդեպ: Չինաստանում կոմունիստներին չեն դատում և վոչ ել նրանց բանտ են նստեցնում: Չան-Կայ-Շիի ճանկն ընկած կոմունիստներին տեղեկատվող դիտատում են: Չի անցնում համարյա մի որ, վոր կոմինտերնը մի նոր ծանր կորուստ չունենա այս կամ այն կապիտալիստական յերկրում: Այսպես կոչված «առաջավոր» բուրժուական դեմոկրատիաներում, ինչպես ՀԱՄՆ-ում, վարձկան ավազակները կոմունիստներին զնդակահարում են դարան մտած անկյունից:

Ան նեգրական գոտու հարավային նահանգներում նրանց յենթարկում են Լինչի դատաստանի: Ուղածդ կապիտալիստական յերկ-

կրում գործադուլի առաջնորդը գտնվում է ֆափոտ սրկիայի զնդակով ընկնու սպանությանի տակ: Կան կուսակցություններ, վորտեղ ամբողջ ախտիվը ֆիզիկապես բնաջնջվել է, ինչպես որինակ Բուլղարիայում 1923 թ. սեպտեմբերյան ապստամբությունից հետո և Սոֆիայի տաճարի պայթյունից հետո: Գաղութային յերկրներում կոմունիստներին պահում են վանդակների մեջ՝ չորթթալված յերկաթալարին, ինչպես Հոմերի պատրիկները չղթալում էլին փախած ստրուկներին:

Փաշիստ պրոպեկտորների ձեռքով ապխտադի հրկիղ լըցույց և տայիս, թե մինչև ստորություն ու լիտիություն ինչ ապտիճան են գլորվում հողեվարք ապրող դաս սորգերը պրոպետորիտի դեմ պայքարելիս, ինչի բնդունակ կլինեն այս դատակադերը պատերազմի մոմենտին, ինչ հոհավոր փոճադործություններով նրանք կիտրճեն պահպանել իրենց տերապետությունը:

Այն, ինչ ներկայումս տեղի չե ունենում Գերմանիայի ֆաշիստական զնդաններում, սեպցրել է սպիտակ տերրորի մինչև ամճ գոյություն ունեցող պրիմները: Փաշիստական դրահայիններն ու նրանց պրիմլերն աւես նույնությամբ յնդորինակված են դենիկինյան հակահեղափոխությունների մեջ իշխող հարբած սպիտակ դժարդիական սրկիաների դադանային կերպարանքից:

Գերմանիայի այսպես կոչված «ադգային հեղափոխության» լիթացքում նպանվել են ավելի քան 2 հազ. կոմունիստ, տակնուվրա յեն արվել տառյակ հաղարավոր բանտորական բնտարաններ, աշխատանքից ու նպատակից զրկվել են կոմունիզմին համակրելու մեջ կասկածվող հարյուր հազա ավոր բանվորներ:

Այս պայմաններում դերմանական կոմկուսակցությունը վչ միայն պահպանել է 100 հազ. անդամ, այլև չարունակում և աճել (ծավախարու քյուսկներ):

Չե վոր այսպիսի ընդհատակի յուրաքանչյուր կոմունիստ, դա պրոպետարիան փոսի յե. պատժության նժարի վրա նա տվելի յե կշուում, քան այն տասնյակ հաղարները, վոր մինչև վերջերս քվեարկել և հոգուտ սոցիալ-դեմոկրատիայի: Յեկ փառք ու պնտիվ դերմանական կոմկուսակցությունն ու նրա կենտրոնական

կոմիտեյին և նրա առաջնորդ ընկ. Թեմանին, վերոնք այսպիսի կազմեր են սնուցել (ծափահարություններ: Բոլորը վստփի յեմ կանգնում և յերկար ծափահարում): Իսկ այսպիսի կոմունիստներ, ընկերներ, կոմունիստական ինտերնացիոնալն արդեն ունի բաղամաստանյալ հաղարկերով կապիտալիստական աշխարհում: Յեւ այս տասնյակ հաղարկավոր կոմունիստ կազմային անդամներից, վերոնք հեղափոխական մարտերի պրոցեսում կաճեն միլիոններով, համաշխարհային բուրժուազիան ավելի շատ է վախենում, քան ներկայիս միլիոնավոր սոցիալ-դեմոկրատները: Համայն աշխարհը սքանչացավ Գեորգի Դիմիտրովի վարմունքից: (Պատգամավորները վստփի կանգնած ծափահարում են: Բացակամչություններ «բռնվո»):

Գեորգի Դիմիտրովի վարմունքը, — սա կոմունիստին չլայել վարմունք է, վորն ուրիշ, ավելի համեստ պայմաններում ցուցաբերել են հաղարկավոր կոմունիստ կազմայիններ բոլոր կապիտալիստական յերկրներում, մի վարմունք, վոր սովորեցրել են լուրջեկներին կուսակցությանը թե՛ Լեւինը և թե՛ Ստալինը և վորը նրանից սովորել են կոմունիստական ինտերնացիոնալի մյուս սեկցիաները (ծափահարություններ): Մի՞թե Համբուրգի բանվոր Լյուրդենսը, վոր մեռավ Փաշիստական տապարից՝ բացականչեւ լով — «կեցցե համաշխարհային պրոլետարական հեղափոխությունը», բոլջեկիյան նույն խառնվածքի մարդ չե, ինչ և Դիմիտրովը:

#### ԿՈՄՄՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿՈՓՈԽՄԸ

Կոմիտեներն անցած եւզու. նշանակությունն այն է, վոր Լիւկնեխտի ձայնը մենակի ձայն չի, ինչպէս 1914 թվին, այլ հաղարկավոր Լիւրկնեխտներ այժմ կապիտալիստական յերկրներում արդեն այսօր բարձր են պահում և վաղը, իմպերիալիստական նոր պատերազմի դեպքում ել ավելի ամուր կպահեն համաշխարհային պրոլետարական հեղափոխության գրոշը (ծափահարություններ): Յեւ այստեղ, ընկերներ, բանն առանձին մարդկանց ստուգելը չէ: Ամբողջ կուսակցություններ են արդեն պատմական այսպիսի ստու-

գում կրել: Մի՞թե Գերմանիայի կոմունիստական կուսակցության վարմունքն ու աշխատանքը Փաշիստական տեւորի պայմաններւ բոլջեկիյան կոմիւնիստական ամենաշխուկ ստուգումը չե Գերմանիայի կոմունիստական կուսակցության համար:

Մի կուսակցություն, վորի Կենտկոմի յերեք անդամներն սպանված են, վորի յուրաքանչյուր ղեկավար աշխատող վաստորեն հանդիսանում է «մահապարտ», վորի տաս հաղարկց ավելի անդամները ձերբակալվել են մի շարափում անցյալ տարվա նոյեմբերին՝ վոչ մի բոլե չեղ դադարեցնում իր աշխատանքը: Փաշիստական դիկտատուրայի հաստատման ժամանակից նա տարածել է մոտ 2 միլիոն տպագիր հրատարակություն: Նրա կենտրոնական անլեզալ օրգան «Ռուտե Ֆանեն», թեև լույս է տեսնում անկաշոն, կարդում են մարդկանց ավելի մեծ շրջաններ, քան յերբ «Ռուտե Ֆանեն» հրատարակվում եր լեզալ (ծափահարություններ):

Տասնյակ հաղարկավոր անհայտ հերոսներ՝ դերմանական բոլջեկներ, ամեն բոլե վտանդի յենթարկելով իրենց կյանքը, տպում եւ տարածում են թուլջեկներ, ազիտացիա յեն մղում դուրծարաններում, վորոնց այժմ կուսակցությունը դարձրել է իր դուրծունեյության դիւնավոր ասպարեղը: Կոմունիստական ազատ խոսքի համար մարդիկ մեռնում են նույն արիությամբ, վորով բոլջեկները մեռնում եյին քաղաքացիական պատերազմի ճակատներում: Թյուրինգիայում մի անշան կուսակցական բանվոր, բարիկադավելով իր բնակարանում, բացում է լուսամուտները և Մոսկվայի ռադիոյի ձուր հաղորդում հավաքված բաղմությանը, մինչև վոր Փաշիստական զաղանները ջարդում են բարիկադոր և նրան տեղնուտեղ սպանում: Ամենածանր ընդհատակի պայմաններում լայնորեն զարգանում է ստորին կուսակցամակերայությունների նախաձեռնությունը, վորոնք արագ և ինքնուրույն արձագանգում են յերկրում կատարված ամեն մի անցքի: Աճում են կուսակցական նոր կազմեր, վորպիսի հանդամանքը թույլ է տվել կուսակցության չորս անգամ խոշոր ձերբակալություններից հետո ձերբակալված ընկերներին վերադարձնել նորերով: Մի՞թե կուսակցու-

թիւն բուլղեիկյան կոմիտեի կողմէն համար ցուցական չեն այն վաւարարութիւնը, վոր Գերմանիայի համակենտրոնացման ճամբարներում բանտարկւած 60 հազ. կոմունիստներէն և առհասարակ բանտարկւած 150 հազ. կոմունիստներէն ֆաշիստական վտարանդութիւնը վրէժ մի «վկա» չկարողացաւ գտնել Լալայի ղեկավարութեան համար և հարկադրւած էր դործել քրեական աշխարհից վարձատրուած կեղծ վկաներով (ծափահարութեամբ)։ Այսպիսի կոմիտեիները չի կարող չնմանալ բանտարկուած վտարանդութիւնը, այսպիսի կոմիտեիները կան միւրիւններով։ Յեղ աշխարհի միւրիւնները, վորոնք, բոլոր ֆաշիստական վտարանդութեան, իրենց բողոքներն են արտահայտել ֆաշիստական կառավարութեան դեմ անցյալ տարեկան նոյեմբերին, ճշգրիտ մեծամասնութիւնն անկասկած, սլաւականութեամբ էր կոմունիստներին, վորովհետեւ միայն կոմունիստները կարող էին չմտադրուիլ ֆաշիստական գեղակ ստանալուց իրենց քաղաքականութեան կամ ձեռնարկութեան համար։

Մի՞թե բուլղեիկյան այսպիսի ստուգում չընենց արդեն մի ալ կոմիտեիները, վոր կարեւոր դերն են խաղում՝ ճապոնիայի կոմիտեիները։ Միայն ինն ամսում, բուլղարական մասնաւոր մեծ թիւով թափանցող չափազանց թերի տվյալներով, ճապոնիայում ձերբակալուած են մոտ 8 հազ. կոմունիստ ու կոմյունիստական։ Յեղ աշխարհի մեծամասնութիւնը, ճապոնիայում մի ձերբակալուած ինքնաշարժային բարձրանում են տասնյակ նոր կոմունիստական ուժեր։ ճապոնական կոմիտեիները անհեղինակ են բուլղեիկյան պողպատե սերունդը։ Ահա ձեզ մի ուրիշակ, յերիտասարդ կոմյունիստներն վեց շաբաթ տեղի տանջանքների ընթացքում վրէժ միայն ցուցաբերեցին չի տալիս, այլ ի դարձման ֆաշիստական դաժնիքներ, վրէժ մի հեծեծանք, վրէժ մի խոսք չի արտաստում։ Միայն ճապոնիայի կոմիտեիները են յերկրում չմտադրուած մոտեցողութեամբ սլաւականներում, այն պայմաններում, յերբ ճապոնական տարիքային-դեմոկրատիան ազդարարում է, թե Մարքսիստական սոցիալիզմն է կառուցւում՝ արիւրաւոր պայքարում Չինաստանի պատերազմի դեմ։ Նա կոմիտեիներն իրենք սկիզբներին տալիս են բուլղեիկյան մասնաշաղկապի աշխատանքի նմուշ, վորը մինչև ամենա-

մանրամասները վերարտադրում են մեր կոմիտեիներին անխառն չընենք աշխատանքի արիւթները։ Նույն ձեռքով ձեռնարկութիւնները, նույն կարողութիւնը կառուցելու բանտարկուած անկասկածական կարիքներից, վորպեսզի նրանց առջև դրվեն դասակարգային պայքարի հիմնական հարցերը, կոչերի ու հողմանքների նույն պարզ, հատուկ ու հասարակ լեզուն, վարոնց կլասիկ վարպետներն են ինն ուսուցիչները։ Վերջին ժամանակներս չափազանց ուժեղացել է կոմունիստների ակտիւ աշխատանքը ուղիւղական ձեռնարկութիւններում։ Մի քանի տարի շարունակ, չնայած հակաշաղկապի ձախողութիւններին, կոմիտեիները կենտրոնական ուղիւ «Սեկկին» («Կարմիր դրոշ») չէր դադարում հրատարակւելուց։ Կոմիտեիները ղեկավարների համար հրատարակում են «Չինվորի բարեկամը» լրագիրը, լրագիր նախագիծերի համար կորեյում, գլոբալացիական լրագիր, վոր հազեցած է գործարաններից, գործանոցներից ու ճապոնական գլոբալացի ստացւում թղթակցութիւններով։ Ֆարբիկ-գործարանային սթանցիոն դրւած լիւրագիրը լրագրերի մի ամբողջ ցանց լրացնում է ճապոնական կոմիտեիներին աշխատանքի այս պատկերը։ Առանց խոր հուշումների դժվար է, ընկերներ, կարգաւ այս լրագրերը, վորոնց յուրաքանչյուր խոսքը շնչում է սլոյկտարական վրդովմունքով ընդդէմ շահագործման և լենինյան-ստալինյան պայքարով ընդդէմ իմպերիալիզմի ու պատերազմի։

«Նրանց, ում անվանում են մանջուրական բանդիտ, — դրում են Միլիտերիսի մի գործարանում հրատարակւող Ֆարբիկ-գործարանային այս լրագրերից մեկը, — նրանք մեր յեղբայրներն են, չինական բանտարկուած ու գլոբալացիներ, վորոնք պայքարում են ճապոնական իմպերիալիզմի ինտերվենցիայի դեմ։ ճապոնական իմպերիալիզմը նետում է Չինաստանում արդեն ստեղծւած խորհուրդների վրա և մտադրութեամբ ունի հարձակւելու Սորհրդային Միութեան՝ մեր պրոլետարական հայրենիքի վրա... Իսկ հարձակւել խորհրդային բանտարկուած ու գլոբալացիներին վրա, — սա նշանակում է հարձակւել մեր ինքն՝ ճապոնական բանտարկուած ու գլոբալացիներին վրա» (փոքարկալի ծափահարութեամբ)։

Իսկ այսպիսի թղթակցություններն ու հոգւածները ասանյակ-  
ներով ու հարյուրներով են: Յեւ սա բանավորապէս զգացիական ճա-  
ղանիւթի իսկական ձայնն է, վորին մեր Խորհրդային յերկրի աշ-  
խատավորները յեղբայրության ու պրոլետարիան համերաշխու-  
թյան ձեռք են մեկնում (փաթարկալի ծափահարություններ):

Մի՞թե, ընկերներ, Կոմինտերնի սեկցիաների կոմիտեները  
հենց այսպիսի բոլշևիկյան ստուգում չեն վերջին տարիներս մեր  
սեկցիաների մեծամասնության լավ կազմակերպւած ու իրազեկու-  
միւմ անցումն անկեղալ դրության:

### ՅԵՐԿՈՒ ՀԱԿԱՏԻ ՊԱՅԲԱՐԸ

Բայց յեթե Կոմինտերնի սեկցիաները տարան պատմական այս  
փորձը, ապա հատկապէս այն պատճառով, վոր իրենց մեծ ուսու-  
ցիչներէն՝ Լենինից ու Ստալինից, Համ. (բ)Կ տրինակելի կու-  
սակցությունից նրանք սովորել են բոլշևիկյան անհատություն  
դեպի ամեն տեսակ ուղղութիւններով տատանումներ ու թե-  
քումներ: Յերբ Գերմանիայում ընկերներին մի ստորին խմբակ մոտ  
տաս անգամ հավաքւում է անտառում, վորտեսզի նրանց հրա-  
տարակած լրագրի համարի մեջ վորեն քաղաքական սխալ ու թե-  
քում չսպրդի, ապա սա մի բան տեսնու է: Մարդիկ թեքումից տ-  
վելի յեն վախենում, քան մահւմանից: Այլ թեքման, իբրեւ գլխա-  
վոր վախճի, և «ձախ» թեքման դեմ մղված պայքարի մեջ ահել,  
ամբացել ու բոլշևիկացել է Կոմինտերնն իր գոյության 15 տարում  
և տուանց Լենինի անցած 10 տարում:

Անգլիայի անկախական Բրոկֆելդը Կոմինտերնին կշտամբում է  
նրանում, վոր կապիտալիստական յերկրների կոմկուսակցություն-  
ները Համ. Կ(բ)Կ հետ միասին պայքարել են մեր կուսակցության  
ներսի թեքումների դեմ: Բայց այս հարցերը, վոր լուծվում էյին  
այս պայքարով, այնպիսի հարցեր էյին, վորոնցից կախված էր  
վորջ համաշխարհային բանվորական շարժման բախտը: Յերկու  
ճակատի թեքումների դեմ մղված այս պայքարում Կոմինտերնը  
հասել է իր շարժերի այնպիսի միաձուլության ու համախմբվա-

ծության, վորոնց վոչ մի ուժ չի կարող խախտել (փաթարկալի  
ծափահարություններ): Կոմինտերնի և վոչ մի սեկցիան չերեւաց  
Գերմանիայում Ֆաշիստներին՝ իշխանության գլուխ անցնելուց  
հետո: Ռեմմելենն ու Նեյմանը Գերմանիայում չկարողացան պարտ-  
վողական խմբիկ կառուցել Գերմանիայի կոմկուսակցության շար-  
քերում: Գուտմանը Չեխո-Սլովակիայում 24 ժամում լիկվիդա-  
ցիայի յենթարկվեց քաղաքականապէս, կուսակցությունից վտար-  
վելուց հետո իր հետեից չտանելով վոչ մի մարդ: Յեւ այս յեր-  
կայա միասնությունը կազմում է Կոմինտերնի մեծ ուժը պա-  
տերազմի հանդեպ, Ֆաշիզմի հանդեպ, դեռ մինչև պատերազմի  
սկիզբը կազմալուծվող II Ինտերնացիոնալի հանդեպ:

Լավ մտածեցեք, ընկերներ, ինչ կերպարանք կունենար այժմ  
Կոմինտերնը, յեթե մենք նրա շարքերում թույլ տայինք Ֆրակ-  
ցիոն խմբավորումների ազատություն և այն «կարծիքների ազա-  
տությունը», վոր իր ժամանակին պահանջում էյին Ֆրոստարը,  
Տրոցկին, Խեզլունդը և մյուսները: Անգլիական անկախ բանվորա-  
կան կուսակցության ձախ ուժերով խոտական առաջնորդ Բրոկֆելդը  
Կոմինտերնի հետ կտարած իր նստակազրությամբ նույնպէս  
առաջարկում է մեզ կազմել նոր Ինտերնացիոնալ՝ նրա մեջ մտցնե-  
լով հերձվածային խմբիկները, վորոնց ոգնությամբ բուրժուա-  
զիան ջանում է վորջիացնել բանվոր դասակարգի ուժերը: Այս խմ-  
բիկների ճանապարհը տանում է դեպի բուրժուազիայի բանակը,  
իսկ նոր Ինտերնացիոնալ մեզ հարկաւոր չէ, վորովհետեւ լենինիզ-  
մը չեն վոխարկում բրոկֆելդի հետ (ծափահարություններ):

Բանվոր դասակարգի միասնության ուղին ընկած է վոչ թե  
Նոր, միջանկյալ Ինտերնացիոնալների ստեղծման վրա յով, այլ  
սոցիալ-դեմոկրատիայի, իբրեւ բանվոր դասակարգի դաւաճանու-  
թյան կուսակցության քաղաքականորեն վերացման վրայով և  
Կոմունիստական Ինտերնացիոնալի ուժեղացման ու ամրացման  
վրայով: Միմիայն այս է բանվոր դասակարգի վերկուլութունը  
Ֆաշիզմի ու խմբերիալիստական պատերազմներից: Յեւ Կոմին-  
տերնի VII կոնգրեսը, վոր հրավիրվում է այս տարի, պետք է

դառնա բանվոր դասակարգի հեղափոխական ուժերի համալսման կուրբես պայքարելու ընդդեմ ֆաշիզմի, իմպերիալիստական պառակտմաների ու կապիտալիզմի:

ԿՈՄԻՆՏԵՐՆԻ 15 ՏԱՐԻՆ, 10 ՏԱՐԻ ԱՌԱՆՑ ԼԵՆԻՆԻ

Սոցիալ-դեմոկրատական միլիոնավոր բանվորներ, դառնությամբ ու ցավով կանգնած իրենց մասսայական կազմակերպությունների անանկացման առջև, ավելի ու ավելի հաճախ են տալիս իրենց այն տանջալից հարցը, թե ո՞ր և յե՞րբ:

Յեկ կուսակցության XVII համագումարը, Կոմինտերնի ղեկավար սեկցիայի համագումարը, վորի ձայնին ունկնդրում ե համայն աշխարհը, կպատասխանի այս հարցին: Այո, ընկերներ, մենք գիտենք այս յե՞րբ, յե՞րբ սպառնացող աղետից: 17 տարի սրանից առաջ այս յե՞րբ մեր յերկրի աշխատավորներին մատնանշեց Լենինը՝ Մարքսի ու Ենգելսի հետ միասին՝ մարդկային պատմության այդ մեծագույն հանճարը: Այս յե՞րբ Հոկտեմբերն է, այս յե՞րբ բանվորների ու գյուղացիների հաղթանակն է հին աշխարհի ուժերի նկատմամբ: Մենք արդեն գիտենք մեծ Ժողովրդի փորձով ստուգված միջոցը՝ վերջ գնելու պատերազմներին ու ֆաշիզմին և սրանց ծնեցնող կապիտալիզմին: Սա խորհրդային իշխանությունն է, վորի լողունը ներկայումս, ԿիԳԿ XIII պլենումի վորոշմամբ, դառնում ե կոմունիստական կուսակցություններին ամբողջ մասսայական աշխատանքի կենտրոնական լողունը: Մենք գիտենք դեպի հաղթանակ տանող ուղին. սա պրոլետարիատի միասնական ճակատն է կոմկուսակցությունների ղեկավարությամբ առանձին կապիտալիստական յերկրներում. սա համաշխարհային բանվոր դասակարգի միասնական ճակատն է Կոմինտերնի ղեկավարությամբ, մի ճակատ, վորը ԽՍՀՄ և ԽՍՀՄ-ի շրջանատանի հետ միացած ներկայացնում է անպարտելի մի ուժ:

Այս ուղիով ընթանալով, մենք Հոկտեմբերին հաղթեցինք այն պատճառով, վոր Լենինն է դարձնել բոլշևիկյան կուսակցությունը, վորին հավասարվում է այժմ Լենինիլի մի համաշխարհային

կուսակցությունը՝ նրա ստեղծած Կոմունիստական ինտերնացիոնալը: Նա վոչ միայն այս կուսակցությանը ղինեց հեղափոխական մարքսիլի թեորիայով, այլև նա հարստացրեց ու զարգացրեց այս թեորիան պրոլետարական հեղափոխությունների ու պատերազմների նոր դարաշրջանի համար: Մենք հաղթեցինք, վորովհետև նա սնուցել է բոլշևիկյան այնպիսի կադրեր, վորոնց լավագույն հատկությունների համակենտրոնացած մարմնացումը կարող է արտահայտվել մի բառով՝ Ստալին (Յերկարատև ծափախարություններ, բայորը վոտի յեմ կանգնում):

Մենք վոչ միայն հաղթեցինք, այլև պահպանեցինք ու ամրապնդեցինք այս հաղթանակն այն պատճառով, վոր Լենինի հանճարը մեր յերկրի աշխատավորներին անցկացրեց մեր հեղափոխության ամենամիտանդամով մոմենտներից, հոգեվարք ապրող և դրանից ե՛լ ավելի կատաղորեն ընդգիմացող դասակարգերի պատերազմներից, միջադպին ինտելիկենցիայի պատերազմներից: Բայց մենք վոչ միայն պահպանեցինք ու ամրապնդեցինք մեր հաղթանակը, մենք այն ընդարձակեցինք՝ ամեն կերպ ուժեղացնելով պրոլետարական ղեկառություն և հաղթականորեն կառուցելով սոցիալիստական հասարակությունը Լենինի Ժառանգորդ ընկեր Ստալինի հանճարեղ առաջնորդությամբ:

Ստալինի Լենինյան ղեկավարությամբ առանց Լենինի անցած տասը տարում ԽՍՀՄ այսօր վոչ միայն պրոլետարիատի ղինված մասն է, այլև ղինված ե նորագույն տեխնիկայով: Ստալինի ղեկավարությամբ ԽՍՀՄ այսօր վոչ միայն համաշխարհային պրոլետարիատի մի մասի պետական կազմակերպությունն է, այլև պետական մի կազմակերպություն, վորն իր հզորությամբ առաջ ե չարժում պատմության լծակները և արագացնում կապիտալիզմի կործանումը: Ստալինի ղեկավարությամբ ԽՍՀՄ-ում կառուցված ե համաշխարհային պրոլետարիատի առաջավոր ջոկատի սոցիալիստական տնտեսությունը: Ստալինի և նրա ղեկավարած կուսակցության յերկաթյա, աննկուն կամքով յերեկ տարբեր դասակարգերի ու խափերի պատկանող 170 միլ. բնակչությունը ներկայումս կառուցում ե անդաստեղծ սոցիալիստական հասարակու-

Թյուն, պայքարելով պրոլետարական հեղափոխութեան հաղթանակի համար ամբողջ աշխարհում:

Այժմ, յերբ բուրժուազիան աշխարհը քշում է դեպի խմբաձուլիստական պատերազմներ, յերբ նա ջարդում է կապիտալիստական յերկրների անպէս բանվոր դասակարգին, այժմ առանձնապէս պարզ յերևում է, թե համաշխարհային հեղափոխական շարժման համար ինչ է հանդիսանում մի առանձին յերկրում սոցիալիզմ կառուցելու թեորիան: Սա երևի է Համկ(բ)ի պրոլետարական խորագույն համերաշխութեան, մեծաքույն ինտերնացիոնալիզմի թեորիան: Այս թեորիայով զինված պրոլետարիատը անդուլ պատրաստում էր և պատրաստում է պրոլետարական հեղափոխութեան հաղթանակն ամբողջ աշխարհում:

Լենինը Ռուսաստանում աշխատավորութեանը հասցրեց Հոկտեմբերին: Ստալինը Լենինի ուղիով նրանց տանում է դեպի հաղթանակ ամբողջ աշխարհում (ծափահարություններ): Նրա գնահատութեանն ու հեռանկարները վորոշում ելին այն ուղին, վոր անցավ Կոմինտերնը առանց Լենինի անցած 10 տարում: Այս ուղին նա յուսաւորում էր մարքս-լենինյան թեորիայի չդերպանցված դիալեկտիկայով: Նրա՝ դրանիտի պէս ամուր բոլշևիկյան սկզբբունքայնութեան և բարձրորակ պողպատի պէս ճկուն հեղափոխական տակտիկայով բոլոր յերկրների կոմունիստները սովորում են պայքարել ու հաղթել: Նա սովորեցրել է նրանց դասակարգային մարտերում արթունորեն նայել առաջ, առաջուց ուրվագծել դրոշի ուղղութիւնը, համբերատար կուտակել ուժերը և վճռական մոմենտին ջախջախիչ շանթահարված հասցնել դասակարգային թրչնամուկ:

Ահա, թե ինչու բոլոր յերկրների աշխատավորներն այնպիսի սիրով չըջապատել են մեր Ստալինին: Ահա, թե ինչու կապիտալիստական յերկրներում կոմունիստները համարձակ նայում են մահվան աչքերին, խմանալով, վոր Լենինի գործը վստահելի ձևաձեւերի մեջ է, վոր Լենինի գործն անպարտելի յէ: Ահա, թե ինչու Դիմիտրովն այնպէս բարձր էր պահում Կոմինտերնի գորշը Լալպցիդի դատաւարութեան մեջ: Լենինյան-ստալինյան այս ուրուագիծը:

աճել է Կոմինտերնի գոյութեան 15 տարիների ընթացքում: Նա յն գլխավորելու միջազգային բանվոր դասակարգի մարտը, նա յն Մարքսի—Ենգելսի—Լենինի—Ստալինի գրողով նրանց տանելու գեպի վերջնական հաղթանակ: (Փոքորկալից ծափահարություններ, վորոնք վերածվում են ովացիայի. բոլորը վոտֆի յեն կամգիում, «ուռա» բացականչություններ):

# ՀԱՄԿ (բ) Կ XVII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱԶԵՎԸ

ԿԻԳԿ-Ի ՀԱՄԿ(Բ)Կ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ  
ԸՆԿ. ՄԱՆՈՒԻԼՍԿՈՒ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ.

Լսելով ԿԻԳԿ-ի ՀամԿ(բ)Կ պատվիրակության հաշվետվու-  
թյունը ՀամԿ(բ)Կ XVII համագումարը ամբողջութամբ և լիովին  
համաձայնություն է տալիս ԿԻԳԿ-ի ՀամԿ(բ)Կ պատվիրակության  
քաղաքական դժին և դործնական աշխատանքին :

## ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                                                          |       |
|------------------------------------------------------------------------------------------|-------|
|                                                                                          | Եջ    |
| I Հեղափոխական նգնաժամի անման մասին . . . . .                                             | 3—26  |
| Կապիտալիզմը տնտեսական ճգնաժամի հինգ տարիներին                                            |       |
| հետո . . . . .                                                                           | 7     |
| Հեղափոխական ճգնաժամի աճման անհամաչափությունը .                                           | 17    |
| Համաշխարհային հեղափոխական շարժման ներկայիս<br>մակարդակը . . . . .                        | 24    |
| II Պատերազմ, ֆաշիզմ և հեղափոխություն . . . . .                                           | 26—39 |
| Ճապոնիան և Գերմանիան՝ կապիտալիստական սխտեմի<br>խորտակման ֆակտորներ . . . . .             | 28    |
| Կարո՞ղ եր խափանվել ֆաշիստական դիկտատուրան Գեր-<br>մանիայում . . . . .                    | 32    |
| Յերկրորդ ինտերնացիոնալը՝ համաշխարհային ռեակցիա-<br>յի դիկտոն Գերմանիայում . . . . .      | 36    |
| III Կոմիտեների սեկցիաների կացությունը . . . . .                                          | 39—65 |
| Կոմկուսակցությունների աշխատանքի թուլությունները .                                        | 39    |
| Ձինական կոմկուսակցությունը . . . . .                                                     | 46    |
| Գերմանիայի կոմկուսակցությունը . . . . .                                                  | 50    |
| Մյուս կոմկուսակցությունների կացությունը . . . . .                                        | 51    |
| Հեղափոխական պայքարի դժվարությունները . . . . .                                           | 54    |
| Կոմկուսակցությունների բոլորակից կոմիտե . . . . .                                         | 56    |
| Յերկու ճակատի պայքարը . . . . .                                                          | 60    |
| Կոմիտեներն 15 տարին, 10 տարի առանց լենինի . . . . .                                      | 62    |
| ՀամԿ(բ)Կ XVII համագումարի բանաձևն ընկ. Մանուիլսկու<br>հաշվետու զեկուցման առթիվ . . . . . | 65    |

1000 00 0000

1000 00 0000



AC

ОБЩЕСТВО С ОГРАНИЧЕННОЙ ОТВЕТСТВЕННОСТЬЮ  
"ОБЩЕСТВО С ОГРАНИЧЕННОЙ ОТВЕТСТВЕННОСТЬЮ"  
ОБЩЕСТВО С ОГРАНИЧЕННОЙ ОТВЕТСТВЕННОСТЬЮ

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

244

Апр.  
12-31432



34

Д. МАНУИЛЬСКИЙ  
ОТЧЕТНЫЙ ДОКЛАД XVII СЪЕЗДУ ВКП (б)  
О РАБОТЕ ДЕЛЕГАЦИИ ВКП (б) В ИККИ  
Партиздат Эривань 1934.

mp 1  
gm 1

ՀՀ Ազգային գրադարան



NL0188093

Apm.

2-3143<sub>2</sub>